

...ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ...
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984



Գրքագործական տերմիններ

Տիկեր

ԳՄԴ 84 Հ 1
Գ 887

Աշխատասիրությամբ՝
Մ. Թ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ
Խմբագիր՝
Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գրիգորիս Աղթամարցի.
Գ 887 Տաղեր/Աշխատասիրությամբ Մ. Թ. Ավդալբեգյանի.— Ե.: Սովետ գրող, 1984.— 120 էջ.— («Հայ քնարերգություն» մատենաշար).
Ժողովածուն ընդգրկում է XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծական ժառանգությունը:
4702080100 (55)
Ա ——————— 84 «S»
705 (01) 84
ԳՄԴ 84 Հ 1
Ար 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, ձևավորման, առաջաբանի համար, 1984

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

16-րդ դարի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու կենսագրական տվյալները խիստ սուղ են, մեծ մասամբ իր բանաստեղծություններից քաղված: Նա սերում է Արծրունյաց թագավորական տոհմից, Սմբատ թագավորի թոռն է և կաթողիկոսական գավազանի ժառանգական կրողը:

Իհարկե, 16-րդ դարում «թագավորական տուն» և «թագավոր» հորջորջումներն այլևս չեն ունեցել այն նշանակությունը, ինչ առաջներում: Դա ավելի ժողովրդի մեջ հայերի «անկախության» երազանքներին բավարարություն տվող բարոյական միավոր էր, քան՝ պետական-պաշտոնական ուժ:

Դեռևս Գրիգոր Ռաբունուն աշակերտելու տարիներին գրված բանաստեղծության մեջ նա նշում էր.

Ի թուականին հայոց ինն հարիւրի
Վաթսուն և հինգ տարի ւ ի Ամայ անելի (1516 թ.)
Ես՝ Գրիգորիս Ճուաստ Աղթամարցի
Ապիկարս տեսուչ և անհիշելի...

«Տեսուչ» եպիսկոպոս է նշանակում, այդպես էլ անվանվում են եպիսկոպոսները Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականում», բայց ըստ հայագետ Ներսես Ակինյանի՝ այդ Գրիգորիս Աղթամարցու համեստ ակնարկն էր իր կաթողիկոս

լինելու մասին: Եվ իրոք, ձեռագրական տվյալները ճշգրտում են նրա կաթողիկոսական գահ բարձրանալու տարեթիվը՝ որ է 1512 թվականը: Այդ փաստը հիշատակվում է նրա բանաստեղծությունների վերնագրերում «Ի Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսէ ասացեալ», «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն ի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ» կամ «Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարայ ըստ անուն երգողին» և այլն: Երկերի ստեղծման առանձին տարեթվեր են պահպանված բուն ստեղծագործությունների վերջում: Օրինակ՝

Թուին ճայոց իննհ հարիւր,
Եւթանասուն ւ երկու այլ իւր (972—551 = 1523):

Բանաստեղծությունների մեջ պահպանված այս թվականներով որոշակի է դառնում Գրիգորիս Աղթամարցու ապրած ժամանակաշրջանը՝ 16-րդ դարի առաջին կես: Նրա կենսագրության վերջին տվյալը վերաբերում է 1544 թվականին, երբ նա դեռևս կաթողիկոս է հիշվում: Թե դրանից հետո քանի՞ տարի է նա ապրել, ձեռագրերը ոչինչ չեն ասում:

Իր ապրած ժամանակաշրջանի՝ թուրք-օսմանյան ասպատակությունների, ավերածությունների ու չհաստակությունների մասին բանաստեղծն ինքը շատ հակիրճ գրել է.

Հագարացիք օրինօք թիւր,
Զազգս խաւնեն որպէս ըզճուր...

Սա նշանակում է, թե օտար տիրակալներն իրենց թյուր (ոչ քրիստոնյա) օրենքներով մեր ազգը հրի են մատնել, խռովելով այն իրադրության պատկերը, որ մանրամասն ու հավաստի նկարագրում են ձեռագիր հիշատակարաններն ու պատմագրական հուշարձանները: Եթե սրան ավելացնենք

նաև ժողովրդի ուսերին ծանրացած հարկային լուծն ու կրոնական հալածանքները, ապա պարզ կլինի հայ ժողովրդի վիճակը Գրիգորիս Աղթամարցու ապրած ժամանակաշրջանում: Նույնպիսի փոքրիկ, բայց դիպուկ արտահայտություններ ենք գտնում նրա բանաստեղծություններում իր հետագա տարիների աստանդական կյանքի, բեկված սրտի ու հոգեկան տառապանքների մասին:

Երգեմ ձայնիս ընդաղէ,
Մոլորակաճ եմ ի տանէ,—

գրել է ընկերոջը՝ Հովսեփ Աղթամարցի նկարչին ուղղված իր նամակ-բանաստեղծությունում: Իսկ ուսուցչին՝ Գրիգոր Բաբունուն, ձոնված տաղում բացվում է ավելի.

Որպէս զջուր գնամ ես,
'Ի տեղ դադար չառնեմ ես,
Ղարիպ կեանք շրջիմ ես,
Կեանքս է հարամ, թէ գիտես:

Եվ իրոք, նրա ձեռագրերը մեկ տանում են դեպի Աղթամար, Մեծոփ, Արճեշ, Ռունկար, Վարագ վանքերը, ուր «թափառնիկ» կյանքով տարբեր վայրերում ծվարած բանաստեղծ-կաթողիկոսը մատյաններ է արտագրում, ձեռագրեր նկարազարդում: Ձեռագրերում պահպանված են Աղեքսանդր Մակեդոնացու կյանքի նկարազարդված պատմության օրինակներ, որոնք հատուկտակես Գրիգորիս Աղթամարցու գրչին են պատկանում. այդ նշված է կամ նկարների կողքին կամ գրքերի հիշատակարաններում:

Բայց ամենից ավելի Աղթամարցին բանաստեղծում է՝ երգում սեր ու խաղաղություն, գարուն ու բնություն, աստվա-

ծաշնչական «Երգ երգոցի» հարասության մեջ դնելով հոգու սեփական ջերմությունն ու կյանքի ծարավը:

Ուսումնասիրության շրջանում գրված Աղթամարցու տաղերը ներկայացնում են այն միջավայրը, հոգեբանությունը, բարքերն ու գրական ավանդույթները, որոնցում ձևավորվել է երիտասարդ բանաստեղծը: Նրա վաղ շրջանի ստեղծագործություններին բնորոշ են միջնադարյան-կրոնական մտածողություն արտահայտող գաղափարներ, որոնք համահունչ են մեր շատ տաղերգուների ստեղծագործություններին: Դրանց նյութն է մարդու մեղսականության գաղափարը («Եղուկ ու հայար մի վայ»), աստվածածնին նվիրված փառաբանությունը («Անեղին տաճար»), վարքագրական հերոսների մեծարումը («Ոտանաւոր, պվարս Մարինոսի ճգնավորին», «Տաղ Աստուածատուր խաթայեցուն»), մտերիմներին ուղղված անձնական քնարերգական պոռթկումները («Գանգատ առնեմ սիրով պքեպ», «Այբէն մինչև ի Քեն քէնէ գանգատիմ եմ») և այլն:

Նույնիսկ այս շրջանի ժառանգության մեջ արդեն նկատվում է մի հանգամանք, որ հետագայում պետք է դառնա Աղթամարցի բանաստեղծի հեղինակային դիմանկարի բնորոշ առանձնահատկությունը՝ արտաքին պարկության մեջ ասելիքի անհատականությունը. այդ է պատճառը, որ նրա շատ ստեղծագործությունները մինչև օրս իրենց բովանդակությամբ մասնագետների վեճի առարկա են մնում կամ, առնվազն, տարբեր մեկնաբանությունների արժանանում: Թերևս այստեղ պգալի դեր են խաղացել նրա երիտասարդական պգայուն ընկալումների և կաթողիկոսական դիրքի հակադրությունը. անմիջական պգացումների պոռթկումներ, միաժամանակ՝ մշուշապատ, սքողված ակնարկներ. ահա դրանցից մի նմուշ.

Գանգատ առնեմ սիրով քեզ,
Թէ միտ դնես ու լըսես,
Ջնառայս քո անտես չառնես,
Ջխորհուրդ սըրտիս յայտնեմ քեզ:

Բարուճաբար խրատես,
Ջյիմարս ի յիմաստ ածես,
Ջցրուեալս դարձեալ ժողովես,
Թևօքդ քո ամփոփես:

Ո՛ւմ է ուղղված ցգացմունքը. կնո՞ջ, ուսուցչի՞ն, ընկերո՞ջը: Որոշ դեպքերում դա մոտավորապես որոշակիանում է կա՛մ ակրոստիքոսով, կա՛մ վերնագրով, կա՛մ էլ բանաստեղծության մեջ՝ կոչական դիմումով: Իսկ որոշ դեպքերում, ինչպես օրինակ «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղում վարդի ու բլբուլի պատմության մեջ բանաստեղծի ենթատեքստը մնում է անորոշ ու մշուշապատ:

Թվում է, թե դա որոշակի սիրավեպ է: Սակայն տաղի սիրային ընդհանուր տրամադրության մեջ բացառված չէ տեսնելու նաև հայրենիքից քշված ու վտարանդի բանաստեղծի կսկիծը:

Այս դեպքում բլբուլը հեղինակ պիտի դիտել, իսկ վարդը՝ Հայրենիք: Ուր էլ ապաստանել է բլբուլը, կսկծացել է նրա հոգին և տեղից տեղ թափառելով՝ հանգիստ չի գտել:

Տաղի հայրենասիրության մի կողմն կարող է ծառայել նրա կտրուկ վերջաբան երկտողը՝ երկիրը «հագարացոց» ձեռքին խանձված լինելու մասին: Եթե նույնիսկ «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղում Գրիգորիս Աղթամարցին չի այլաբանել հայրենիքն ու նրա նկատմամբ ունեցած իր վերաբերմունքը, այլ մարդկային սիրո պատմությունն է արել, ապա, միևնույն է, դրանով նա ստեղծել է մի երազային բնաշխարհ,

որ հակադրված է առկա իրականությանը: Սա մի տեսակ ձրաժարումն է այդ դառն իրականությունից, յուրատեսակ փախուստ՝ ոչ թե մոեռանդ հավատից ու մեղքերի ծանրությունից, այլ ապագային ահավոր ապանդից թելադրված: Այդ երևույթը մարմնավորում էր Աղթամարցու ժամանակաշրջանի մարդկանց տենչանքը խաղաղ կյանքի, սիրո ու երջանկության մասին:

«Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղը ուշագրավ է գեղարվեստական մի շարք առանձնահատկություններով. այն գրված է յամբական պարզ տողերով, հանգերը փոփոխվում են յուրաքանչյուր տան մեջ, քանի որ տաղը տնավերջ տառերով այբուբենն է հոդում: Բանաստեղծության լեզուն մյուսներից տարբերվում է իր շարահյուսությամբ, բարբառային ձևերի ավելի հաճախակի գործածությամբ:

Նշված տաղը մեզ օգնում է Աղթամարցու միևնույն շրջանի ստեղծագործության մեջ տեսնելու երկու տարբեր բնույթի գործեր, մի խումբ, որ հարապատ է ժամանակի հոգևոր գրականությանը (գրաբարյան բառապաշար, հոգևոր երգերում ընդունված ոճեր ու թեմայի որոշակիություն), մյուս կողմից՝ տիպիկ տաղերգական, նույնիսկ աշուղական երգերը հիշեցնող ստեղծագործություններ (միջին հայերեն, ժողովրդական պարսկաբանություններ, տաղաչափական մատչելի ձևեր, թեմայի այլաբանական դրսևորում):

Հետագայում միևնույն զգացումներն ստանում են բանաստեղծական նոր որակ՝ ուղղակի պատկերների խորքում թաքնված վերացական ենթիմաստ, որն ընդլայնում է թեմայի ընկալման սահմանները: Այդ վերացականությունը ամենից ավելի երևան է եկել «Դու ես յԱդինայ դրախտէն», «Արեգակնափայլ գեղով լի լուսին», «Դու դրախտ Եդեմայ», «Դու ես արե-

գակ, յուսին ի լման», «Աստուածանկար պատկեր յօրինեալ» և այլ տաղերում, որոնք բացահայտում են Աղթամարցու ստեղծագործության այդ ուշագրավ առանձնահատկությունը: Նրա տաղերում հաճախ հանդիպող գունագեղ նկարագրությունները, պատկերավոր բնութագրումներն ու հուզաթաթավ արևելյան զուգորդությունները, չափապանցական ոճերը միշտ չէ, որ առ կինն ունեցած զգացման արտահայտություններ են, այլ, երբեմն, բանաստեղծական հնարանք, որ կիրառում է նա այս կամ այն մտերմի՝ ուսուցչի, ընկերոջ կամ նույնիսկ օտարի նկատմամբ: Դրանք ներբողական դրսևորումներ են՝ ոճավորմամբ սկիզբ առած նաև գանձագրական կամ ջարականային ակունքներից:

Աղթամարցու ստեղծագործությանը հատուկ է միջնադարում սիրված այլաբանությունը, որ փոխարինում է անորոշ վերացական դրսևորմանը և հնարավորություն տալիս ստեղծագործությունն ընկալել թե՛ իր ուղղակի իմաստով, թե՛ այլաբանական մտքով: Այդպիսիներից են «Ահա այգիք մեր ծաղկեցան», «Գարունն երեկ», «Ցետ գնպոյ վարդին» տաղերը:

Հայ տաղերգուներից ամենից ավելի Աղթամարցուն են վայելում Մ. Աբեղյանի այն խոսքերը, թե «Հետագայում (Կոստանդին Երզնկացուց հետո) ևս այլաբանության են դիմում բանաստեղծները, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել, այլ, որ այլաբանական ձևը դուր էր գալիս կրոնավորներին»: Նշանակում է՝ այլաբանությունը ժամանակի ընդունված հնարանք է եղել, մտածելու և բանաստեղծելու մի ձև, որ շատ հրապուրել է նաև Աղթամարցուն: Բայց Աղթամարցու այլաբանությունը տարբերվում է մյուս տաղերգուների այլաբանությունից այն բանով, որ, եթե, ասենք, Կոստանդին Երզնկացին որոշակի նշում էր իր այլաբանու-

թյան բովանդակությունը, թե վարդ ու բլբուլի սիրավեպի մեջ «մի ի մարմին հասկանալը, այլ՝ հոգևոր», ապա Աղթամարցին ոչ միայն որոշակի չի դարձնում այդ, այլ, ընդհակառակը, կարծես դիտավոր այնպես է հորինում տաղը, որ որոշակիությամբ չսահմանափակվի նրա ներգործության աստիճանն ու շրջանակը:

Ինչպես Գրիգոր Նարեկացին, չորոշակիացնելով մեղքի գաղափարը, Ողբերգության մատյանում հնարավորություն էր ստեղծում միջնադարում ապրող ամեն մի անհատի համար՝ տեսնելու անձնական մեղքի հիշատակություն ու բոնելու ապաշխարանքի ուղին, այդպես էլ Գրիգորիս Աղթամարցին երգում էր այնպիսի այլաբանությամբ, որ և խստաբարո կրոնավորն իր հոգու համար նրա մեջ գտներ, և՛ պանդուխտը՝ միխթարություն, և՛ սիրահարը՝ ողջակեզ սիրտ:

Աղթամարցու ստեղծագործությանը հատուկ է բազմաձայնությունը, ինչպես լինում է երաժշտության մեջ: Մեկ թեմա չէ, որ ծայրեծայր ու որոշակի կարգանում է, այլ հույզերի ու թեմաների մի խաչաձև միահյուսում, որ մի կողմից դժվարացնում է երկի անմիջական ընկալումը, բայց մյուս կողմից՝ պատճառ է դառնում ընթերցողի յուրօրինակ ընկալման: Սա մի կողմից վկայում է Աղթամարցու բանաստեղծական հմտությունը և մյուս կողմից՝ բացահայտում ժամանակի պատմահասարակական կյանքի բարդությունն ու գաղափարական խնդումների առկայությունը:

Եվ որքան էլ Աղթամարցին իբրև կաթողիկոս ցանկանում էր քողարկել իր երկերի աշխարհիկ շունչը, միևնույն է, նրա տաղերը մեծ մասամբ ընկալվում էին իբրև աշխարհիկ զգացումների արտահայտություններ:

Տաղարաններից վարուց արդեն դուրս էին եկել և ժո-

ղովրդի մեջ մտել Ֆրիկի, Երզնկացու, Կեչառեցու, Թլկուրանցու, Նաղաշի երգերն ու սիրո տաղերը: Նույն տաղարաններն էին ներթափանցել ժողովրդական սիրո հայրենները: Աղթամարցու նույնիսկ կրոնական տաղերն առողը կամ լսողը միշտ կարծելու էր, թե նա էլ «ի մարմին» է երգում: Այսպես ընկալելու շատ հիմքեր էին տալիս այդ տաղերը. նրանք հագեցված էին հույզով, մարդկայնությամբ, սիրով դեպի մարդը, բնությունն ու կյանքը: Խաղաղ կյանքի կարոտ մարդը Աղթամարցու նույնիսկ այլաբանված գարնան ու վարդի մեջ պիտի տեսներ իսկական գարուն, կատարյալ սեր, մարդկային կարոտ:

Այդ էր տեսնում միջնադարյան մարդը նաև մեր տաղերգության գոհարներից մեկի՝ «Յամէն առաւօտ և լոյս» տաղում, որը նախորդների նման բազմանվագ է իր այլաբանությամբ:

Ամեն օր արևածագին, երբ քնից արթնացած քնարական հերոսը լսում է պարտեզից դայլայլող սոխակի երգը, այդ ընդունում է իբրև մահվան հրավեր:

Յամէն առաւօտ և լոյս
Գաբրիէլն ասէր հոգոյս.
«Արի՛, ե՛կ ի յայս այգոյս»,
Այս իմ Նորատունկ այգոյս:

Այգին ցանկով ու հնձանով Աղթամարցու ստեղծագործության մեջ կրկնվող մի սիրված պատկեր է, որ խորհրդանշում է կյանքը: Բանաստեղծության փիլիսոփայական-խոհական առանցքն այն է, թե մահը մարդուն ուղեկցում է ծննդից ի վեր, որ նա միշտ պետք է պատրաստ լինի դիմավորելու մահվան՝ միջնադարյան այն ըմբռնումով, որ մաքրագործված լինի մեղքերից և պատրաստ՝ կանգնելու ահեղ դատաստանի

առաջ: Պարտեզը մարմինն է, ծաղիկները՝ մարդու գեղեցիկ արարքները, փշերը՝ նրա մեղքերը:

Միջնադարում ընդհանրացված այս գաղափարը տաղում ստացել է նոր երանգ ու բովանդակություն: Այլևայլ հույզերից ավելի պատեղ հնչում է մարդկային կյանքի կարճատևության ողբերգությունն՝ ի հավաստումն այդ կյանքի սիրո ու փառաբանության:

Ինչպէ՞ս եյնեմ ի յայգոյս..
Քար եմ բերեր սարերոյս,
Փուշ եմ կրեր ձորերոյս,
Պատ եմ քոլորեր այգոյս...
Դեռ չեմ կերեր ի պտղոյս,
Կասեն՝ թ՝ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Բայց որքան էլ ծանր է մարդու համար աշխարհը թողնելը, որքան էլ տառապալից է մահվան գաղափարը, այդ անխուսափելի է:

Հոգին մարմնից անջատվելուց հետո, մարդու կյանքի կարճատև ընթացքն ավարտելուց հետո էլ շարունակվում է կյանքըն իր բնական ճանապարհով և, ինչպես իր կենդանության օրոք, մահից հետո էլ առանց այգեպանի հարատևում է կյանքը:

Այստեղ արտահայտված է քրիստոնեական հավատով ու բարոյականությամբ անված միջնադարյան մարդու և՛ սերը կյանքի նկատմամբ, և՛ սիրո անհագուրդ ծարավը, և՛ ափսոսանքը գեղեցիկը թողնելու համար, և՛, միաժամանակ, հավատն ու երկյուղը հանդերձյալ կյանքի հանդեպ: Բայց այս բարդ հանգույցը բանաստեղծի գրչի տակ վեր է ածվել կյանքի գովերգի և իր տրամադրությամբ հաստատել կյանքը՝ կամա թե ակամա հակադրելով երկնային գերադասության ու հանդերձյալ կյանքի գաղափարին:

Իր տաղերի բավմահարուստ ձևերով և կյանքի նուրբ զգացողությամբ Աղթամարցին նորի արտահայտիչն է եղել միջնադարյան հայ գրականության մեջ: Չբավարարվելով անցյալի ժառանգության օգտագործումով, նա հարստացրել է իր ստեղծագործությունները արտահայտչական նորանոր հնարանքներով, ավելի սերտորեն մոտենալով ժողովրդական ոգուն: Անգամ ոտանավորի կառուցման ավանդական ձևերում (ակրոստիքոս) նա հետևել է լեզվի ժողովրդական՝ բարբառային հնչմանը, ի տարբերություն այլ տաղերգուների գրաբարի հնչյունական համակարգի օգտագործման:

Սակայն Աղթամարցու ուժն ու հմայքը նրա ընդհանրացման կարողությունն է, նեղ անձնականը համընդհանուր դարձնելու վարպետությունը: Նրա տաղերում ոչ այնքան բանաստեղծին առիթ տվող մանանակի փաստը կամ մարդկային հույզերի զգացումն է վերարտադրված, որքան դրանց ընդհանրացված դրսևորումն առհասարակ: Նրա սիրո և մտածումի ելևէջների մեջ ևս է մղվում բանաստեղծի «ես»-ը՝ ասպարեզ տալով համամարդկայինին:

ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՏԱՂԵՐ

1

ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՄԱՐՑՈՑ Է

Եղուկ ու ճագար մի վայ,
Որ մեղօք ես աղտեղացայ,
Ղեկօք ես ի ծով իջայ
Եւ հողմով չարին վարեցայ:
Կանգնեալ դիտելով ծանեայ,
Չերծելոյ ինձնար իսկ չկայ:
Ես եմ մոլորեալ ծառայ,
Չիս գերեալ չարըն սատանայ:
Լուսով քո չիս ակնարկեա՛,
Չիաւարեալըս լուսաւորեա՛,
Ինձ յոյս և ճարակ չկայ
Եղանել ուսոի ես անկայ:
Գերի ւ անիմաստ ծառայ,
Մ՚ երկմըտեր, աներկբա յուսա՛,

Ռամից խրճաւորող է նա,
Ազերելոյ դարձըն կամենայ:
Իսկ դու ի մեղաց զըղջա՛
Եւ յուսով ի նա հաւատա՛,
Գըթած ւ ողորմած է նա,
Զմաքսաւորն և զպոռնիկն յիշեա՛:
Որ և նոյն աստուածն է նա,
Ամենի զղջալն աղերսայ,
Ռամից քուրջից արքա,
Զատնանացելս ի սէր քո փառեա՛:
Իսկ ես յանցաւոր գըտայ,
Զի ի քէն մեղօք հեռացայ:
Սիրով զիս ի քեզ կապեա՛,
Զիս արժան տեսոյդ քո արա՛:
Նաև եղկելոյս գըթա՛,
Անառակ որդոյս ողորմեա՛:
Ահա ի քէն մերժեցայ
Եւ ըզգույթ սիրոյդ մոռացայ.
Սովամահ եղեալ շրջիմ,
Յագարակ դիւացըն ընթացայ.
Եւ արդ ճըշմարիտ ծանեայ
Զիմ մեղաց մուրհակն ընթերցայ.
Լերինքդ ի կշռել կուգայ
Եւ մեղաց իմոց թիւ ոչ կայ:
Է՛, ողորմելի ծառայ,
Զքեզ յանձն աստուծոյ արա:
Թէպէտ քո չարիքն յոլով,
Որ թըւով ի հաշիւ չըկայ,
Վերըստին մեղաց թափեա՛

Եւ յուսով դու խոստովանեա՛.
Ի կոյսն ապաստան լե՛ր դու
Եւ նովաւ զաստուած աղաչեա՛,
Նշանաւ խաչի նորա
Անդադար զքեզ տեառնագըրեա՛.
Զրօքըդ զիս ողոգեա՛,
Զի տապօք չարին չորացայ:
Կարկամեալ մեղօք մեռայ,
Վերըստին, տէ՛ր, զիս նորոգեա՛,
Դու զիմ ցաւս ապաքինեա՛.
Քաջ բըժիշկ Յիսուս, ողորմեա՛
Եւ քեզ փառք այժմ և ապա,
Անզըրաւ կենօք յարակայ:

2

Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՈՏԱՆԱՒՈՐ ԶՎԱՐՍ ՄԱՐԻՆՈՍԻ ՃԳՆԱՒՈՐԻՆ

Անծին և անըսկիզբն է հայրն երկնային,
Որդոյ պատճառ ծնընդեան անժամանակին.
Բընաւմն անքննաբար, ճըշմարիտ հոգին
Ի կերպն իւր ըստեղծեաց զԱդամն առաջին:
Փառօք զնա զարդարեաց և եդ ի դրախտին,
Պատուէր երետ նմա և կընոջ նորին՝
Ցամենայնէ ուտել պատուիրեաց նոցին,
Բաց ի ծառոյն միոյ բարոյ և չարին:
Ցորժամ անցաւ Ադամ զպատուէրն արարչին

Եւ զմահաբեր պըտուղըն ճաշակեցին,
Եւ մերկ և խայտառակ զինքեանըս տեսին
Յանապական լուսոյն, որ զգեցեալ էին:
Մահու գըրաւեցան, զի զպատուէրն անցին,
Ի տրտմութեան հովիտըս նոքա մըտին,
Եւ քրտամբք երեսաց ըզհրամանն առին
Վաստակել զերկիր և ուտել զբերս նորին:
Աստուածըն մարդասէր և հայրն երկնային,
Որ ոչ անտես առնէ զգործս իւրոյ ձեռին,
Զծոցածինն առաքեաց յերկիր ըստորին՝
Մարմին անապական էառ զմարդկային:
Ըզգործըս կատարեաց միածին որդին,
Առաքելովքն որսաց զազգըս մարդկային,
Ոմանք զփառս աշխարհիս ունայն խոտեցին,
Զինչս և զըստացուածս աղքատաց տուին:
Եւ շատք զհալածանս կամաւ չաձձն առին
Եւ զարիւնս իւրեանց ի յերկիր հեղին.
Եւ դառըն տանջանացըն համբերեցին,
Որպէս գոսկի ի բովըս քըննեալ գըտին:
Իսկ կէսքըն կուսութեամբ զանձինս պահեցին,
Ի յայրս և ի փապարս լերանց բնակէին,
Սովով և ծարաւով զանձինս մաշեցին,
Ըզցայգ և ըզցերեկ աղօթս առնէին:
Անտես ի մարդկանէ անդադար ճրագէին,
Ուրախութեամբ վըշտացըն համբերէին,
Բազում և անհամար են գունդըք սոցին,
Որ ոչ ճառել կարէ լեզու հողածին:
Զոր օրինակ աստեղք երկնից ոչ թուին,
Այնպէս գունդըք սրբոցն ի յեկեղեցին,

Յորոց և ի բազմաց մինն այս գովելին՝
Սուրբ կոյսըն Մարիննս, դուստր Ներգինէին:

* * *

Այր մի աշխարհական և յոյժ մեծատուն,
Բնութեամբ էր ողորմած ւ աստուծոյ սիրուն,
Այրս այս փառաւորեալ Ներգինէ անուն,
Մեռանի կին սորա կամօքն աստուծոյն:
Դուստր մի մընաց սոցա Մարիամ անուն,
Որ էր խիստ գեղեցիկ, խոհեմ ւ իմաստուն.
Բնութեամբ էր սրբակեաց և մըտօքն արթուն
Եւ էր յոյժ սիրեցեալ յաչս ամենեցուն:
Խորհեցաւ հայրն ի միտս ւ ասաց սուրբ կուսին,
Թէ՝ Առըն տաց ըզքեզ ըստ կամաց քոյին,
Եւ ինչք, և ստացուածք իմ ընդ քեզ լիցին,
Եւ ես երթայց ի վանք մի յանապատին:
Յայնժամ պատասխանեալ բանից ծընօղին
Ողջախոհ սուրբ տղուայն և իմաստուք լին.
— Կեցուցանել կամիս ըզհոգի քոյին
Եւ զիմս կորուսանել թուլութեամբ քոյին:
Կամիս դու վայելել ի յանճառ բարին,
Անանց կենօք հըրճուիլ ի փառս արարչին,
Որպէս որ խոստացաւ յԱւետարանին,
Եւ զիս միայն զըրկես. այդ աւհըճարին:
Ասէ Ներգինէոս, հայրըն սուրբ կուսին.
— Ապա զի՞նչ արարից վասըն քո անձին:
Ասէ.— Տար զիս ընդ քեզ ի յանապատին,
Յոր վայր և երթիցես, գամ ըզհետ քոյին:

Ներգինէոս ասէ, թէ՝ Այդ ոչ լինին,
Զի դու ես գեղեցիկ և պատուական կին,
Եւ ես ի յարանց վանս երթամ առ նոսին,
Եւ ասացեալըդ քո բընաւ ոչ լինին:
Պատասխանի երեսո նա իւր ծընօղին.
— Գերծեա զգլուխս,— ասէ,— դու վասն արարչին,
Ըզգեստ ինձ առնացի զգեցո իմ անձին,
Եւ յանձն առնեմ ես զիս կամաց արարչին:
Եւ նա, որ պահապան իւր յուսացողին,
Նա պահեսցէ ըզիս յորսողէ չարին
Եւ յաջողէ ըզգործս իմ ի վարըս բարին
Եւ առաջնորդեսցէ ի յերկինս վերին:
Յայնժամ հանոյ թուեցաւ բանըն տղղային.
Ներգինէոս արար ըստ կամաց նորին.
Բաշխեաց գինչս ամենայն կարօտեալ անձին
Եւ ի յերկինս գաւձեաց, որ ոչ պակասին:
Ելեալ ուղի անկեալ վանք մի գընացին,
Եղեն կրօնաւորք ի սէր անմահին.
Փոքրեալ գհերս Մարիամ և սրբեմ առին
Մարինոս, Եւգինոս զանուանս ասացին:
Ամէր օր ըստ օրէ Մարինոս կուսին,
Ի վարըս ճգնութեան կըրթէր սրբուհին,
Յետ հինգ ամաց փոխի հայր Մարինոսին՝
Բարի վարուք կեցեալ Եւգինէոսին:
Իսկ Մարինոս մընացեալ ի վարըս բարի
Եւ եւրս քան ըզեւս յաւելոյր ի ճմին,
Ճըգներ նա անդադար որպէս զանմարմին
Անխափան սրբակրօն և առաքինին:
Կրօնաւորք ուխտին յոյժ զարմանային

Վասըն չգալոյ մօրուացըն Մարինոսին,
Չի բառքն էր ընբաձայն, ներքինի ասին,
Հասակն էր փոքրագոյն, այնու ստուգէին:
Եւ հայր վանացն ասաց.— Առաւել ճըգնի,
Վասն այն է ընդրբաձայն և մօրուս չունի:
Եւ սուրբըն Մարինոս փոյթ ի կոչնակի,
Արագահաս ծառայ ի յերթևեկի,
Ամենեցուն հնազանդ և լըսող լինի,
Անտըրտունջ ւ անվեհեր ի գործ աշխատի:
Լըցեալ էր բարութեամբ կոյսըն գովելի,
Չի էր ամենայնի գործովքըն բարի:
Յաւուր միում հրամայ ի հօրէն ասին
Երեք կըրօնաւորք հետ Մարինոսին,
Ի պէտս կարեաց վանացն ելեալ գընացին
Եւ ի ճանապարհին պանդոկ մի իջին:
Գիշերն անդ օթեցան մինչ յառաւօտին
Եւ վաղվենէ ելեալ լուսով գընացին.
Ուր և առաքեցան ի պէտս ինչ գործին
Դարձան ի վանս իւրեանց, ուր գնացեալ էին:
Եւ յայնմ գիշերին, ուր եղբարքն էին,
Ջօրական մ' էր իջեալ ի յայն պանդոկին:
Նըզջեաց նա ընդ դրստեր պանդոկապանին
Եւ յղուացոյց ըզնա յազդմանէ չարին:
Եւ, յորժամ ազդեցաւ պանդոկապանին
Խոշտանգեալ նա զդուստրն վասըն չար գործին,
Թէ՝ Ո՞վ ապականեաց զկուսութիւն քոյին,
Ասա, զի գիտացից ըզգործող չարին:
Ասաց թէ՝ Աբեղայքն, որ առ մեզ իջին,
Միանգ, որ էր մանկագոյն Մարինոս ասին.

Նա չար բանիւք պատրեաց զիս այն չար ոգին
Եւ նա անջեաց ընդ իս յայնըմ գիշերին։
Եւ յարուցեալ գընաց պանդոկապանին
Ի վանքըն քարկութեամբ սուրբ Մարինոսին.
Զհայրըն թըշնամանէր, զմիաբանս նորին՝
«Պոռնիկ, պեղծ, խաբեբայ» ասելով նոցին։
Ասաց հայրըն վանաց պանդոկապետին,
Թէ՝ Ի՞նչ վընաս եհաս ի մէնջ քո անձին
Կամ տան և ընտանեաց և ընչից քոյին,
Ընդէ՞ր թըշնամանես զմեզ զայրագին։
Թէպէտ եմ անարժան ես ի մէջ սոցին,
Այլ աբեղայքս հանոյ ծառայք են փըրկչին,
Եւ զիա՞րդ իշխես դու հայհոյել զնոսին,
Որք են իբրև հրեշտակ ամենակալին։
Յայնժամ պատասխանեալ պանդոկապետին.
— Ո՞ւր է այն Մարինոս աբեղայ քոյին,
Որ օթեցաւ առ իս ի յիմ պանդոկին,
Սիրով մեծարեցաք ի յարկըս ներքին։
Ըզդուստրն իմ յըղացոյց, ի յայն գիշերին,
Զիս ատելեաց իմոց արար ճախատին,
Եւ սիրելեաց իմոց տըրտմութիւն հասին,
Եւ թըշնամիքս ամէն զիս այպանէին։
Իսկ Մարինոս չէր անդ յայն ժամանակին.
Եւ հայրն, ասաց, թէ՝ Գայ, գաւեմ սաստկագին,
Ի վանացս արտաքսեմ ըզնա տըրտմագին,
Որ դու ևըս լըսես զհամբաւ նորին։
Եւ ի տուն իւր դարձեալ պանդոկապետին,
Եւ եկըն Մարինոս, հայրն եհարց ընդին,
Թէ՝ անջեցե՞ր ընդ դառեր պանդոկապետին.

Եւ նա խոնարհութեամբ կալաւ ի յանձին։
Եւ ի հօրն յոտքն անկաւ սուրբըն լալագին,
Ասաց թէ՝ Մեղայ, հայր, յաղթեաց թըշնամին,
Գործեցի գչարըն զայն կամօք բանսարկուին,
Դու ծանր ապաշխարանք դիր իմում անձին։
Եւ հայրըն յոյժ գանեաց ըզնա խըստագին
Եւ ի վանացն եհան՝ ասելով ընդմին.
— Եղաք վանօրէից ծաղր և նախատին,
Զիա՞րդ կատարեցեր զցանկութիւն չարին։
Եւ նա երթեալ ընտաւ ի վերայ վիմին,
Որ էր հանդէպ վանաց յարևմըտեան դին,
Կատարելով անդէն զաղօթս ըստ կարգին
Ուրախութեամբ կըրէր ըզվիշտս ի յանձին։
Ապա երթեալ եղբարցն խուղ մի շինեցին,
Զտեղի առեալ եկաց ի յայն խըրճըթին։
Եւ յորժամ ցընկնեցաւ վաւաշոտն այն կին,
Զտըղայն տարաւ ի վանս պանդոկապետին։
Տեսեալ ըզՄարինոս արտաքոյ ուխտին,
Ընկեց զտըղայն ի գոգըն համբերողին
Եւ ասաց՝ Առ զորդիդ, զչար սերմըն քոյին,
Զզաւակըդ քո սընո՝ ի քեզ նախատին։
Իսկ Մարինոս առեալ զտըղայն ի յանձին
Տանէր նա ի կանայս, զի ըստին տացին,
Եւ ի հովուացն առնոյր կաթըն տըղային.
Եւ յետ տարոյ միոյ զնա մըկըրտեցին,
Սըրապիոն անուն ընդմա կոչեցին։
Եւ կաթն էր ոչխարաց կերակուր տղային.
Այնպէս սնոյց զմանուկըն զամս երեքին
Անձաձձիր ւ անտըրտունջ պահէր զպատանին։

Եւ յետ երից ամաց եղբարք ժողովին,
Միաբան գան առ հայրն և զայս ասացին.
— Թէ ոչ դարձ լինիցի վանս Մարիննոսին,
Ելանեմք մեք ամէնքս ի վանաց քոյին:
Եւ հայրըն հրամայեաց՝ գնացեալ և բերին.
Եկեալ անկան ի յոտս հօրըն սրբութին,
Եւ հայրն ասաց թէ՝ Չես արժան սուրբ չարկին,.
Միայն ի վանքըս մո՛ւտ, ըստ խնդրոյ սոցին:
Մարիննոս ոչ կամէր ըզկեալն իւր ուխտին,
Ասէր թէ՝ Թոյլ տուք ինձ մընալ յիմ խըղին,
Զի չեմ ես արժանի կոխել զշեմս ուխտին:
Այլ բռնութեամբ ըզնա ի վանքըն մուծին.
Զանարգ և ըզխիստ գործ հայրն ետուր ընդին,.
Ուրախութեամբ տանէր նա ամենայնին,
Բարի ամօք կեցեալ նա ի սպաս ուխտին,
Համբերող նահատակն և յոյժ գովելին:
Յաւուր միում տեսեալ երազ սուրբ կուսին՝
Այր մի լուսապայծառ, զի ասէր ընդին.
— Եկ ի հանգիստըն քո պատրաստեալ տեղին,.
Զոր յատուածոյ տուաւ քեզ անանց բարին:
Վասըն համբերութեան ճգնութեան քոյին,
Յարուցուարճ բերկրեացիս ի տեւ արարչին,
Եւ տեառն ազնիւ ծառայ, շահող քանքարին,
Ե՛կ, մո՛ւտ ի յառագաստ անմահ փեսային:
Ելեալ խուղն իւր գընաց, որ էր ի վիմին,
Եւ անդ անկաւ հիւանդ ի կարծր անկողին,
Եւ յետ երից աւուրց հանգեաւ սրբուին,
Եւ ոչ ոք զնա գիտաց, մինչ լայր պատանին:
Եւ գընացեալ տեսին ըզերանելին,

Ազդեցին հօր վանացն՝ զմեռանիլ նորին.
Ասաց թէ՝ Անարժան եմուտ տաճարին,
Վասն այն պատուհասեալ մեռաւ փութով:
Եւ հայրըն հրամայեաց, հանեալ թաղէին,
Գնացեալ ըստ օրինին զնա պատանէին,
Որպէս կրօնաւորաց օրէնն ըստ կարգին,
Եւ ի զըսպելն ըզնա տեսին՝ զի էր կին:
Ահի ապուշ մնացեալ և զարմանային,
Դառըն հեծեծանօք յոյժ հառաչէին
Եւ գնացեալ ողբով առ հայրն ասէին.
— Մեղար դու աստուծոյ, փորձանք քեզ հասին,
Ընկեցեր և ըզմեզ ի մեղըս քոյին:
Հայրըն զահի հարեալ և ասաց նոցին.
— Ջի՞ է, ընդէ՞ր, որդեակք, ողբայք սըրտմտագին:
Ապա նոքա ասեն՝ Մարինոս է կին:
Եւ հայրըն զարհուրեալ յարուցեալ գնացին,
Անկաւ ի վրա ոտից՝ նուաղէր հոգին,
Կոծէր զանձն և փետէր զմօրուսն ընդ հերին
Եւ հարկանէր զգլուխն ի քար ւ ի գետին:
Եւ գիրկս արկեալ զոտից սըրբուհոյ կուսին
Եւ ասէր՝ Թաղեցէք և զիս ընդ սըմին,
Ջի զինչ, որ անցուցի ես ի յանձ սորին,
Նա թողութեան չեմ ես արժանի քննին:
Բազում կրօնաւորք ի թաղումն եկին
Աղաչանոյն Քրիստոսի սուրբ ճրգնաւորին:
Մինչդեռ հայրըն կոծէր ի վրա դագաղին,
Եւ Մարինոս կանգնեաց ըզգլուխն ինքնին,
Կալեալ և համբուրեաց զձօրն աջոյ ձեռին,
Իւրովի դարձեալ եդ ըզգլուխն ի մահճին:

Ասաց հայրն ոչ թաղել ըզերանելին,
Մինչ որ պանդոկապանն յըղեալ կոչեցին
Եւ ցուցին զՄարինոս ասելով նորին,
Թէ՝ ճանաչե՞ս ըզդա: Նա ասաց նորին.
— Այո՛, թողու աստուած զյանցանս իւր գործին,
Զոր մեղաւ յիմ զաւակն ի մէջ պանդոկին:
Եւ հայրըն հրամայեաց պանդոկապետին.
— Վերացո՛ ըզօձիսն և տե՛ս ըզըստին:
Եւ բացեալ նա ետես ըզնա, զի էր կին,
Ապշեալ յիմարեցաւ, անկաւ ի տեղին:
Եւ յարուցեալ կոծէր զինքըն խըստագին,
Վայ և եղուկ ասէր նա ինքն իւր անձին.
Եւ յետ լալոյն-կոծոյն տարեալ թաղեցին,
Երգօք հոգևորօք զնա ամփոփեցին:
Իսկ յետ երից աւուրց կատարման կուսին
Դուստրըն այսահարի պանդոկապանին,
Եւ ցըտեալ՝ ատամամբքն ուտէր զիւր մարմին
Եւ եկեալ հերարձակ ի սուրբ տապանին
Յայտնի խոստովանի ըզզրպարտանս նորին.
Ասաց և ըզնընջելն ընդ զօրականին,
Զանմեղ օթագայիլն ըզՄարինոսին.
Բըժըշկեցաւ իսկոյն ի յախտէ չարին:
Իսկ սուրբ տըղայն ընտրեալ և առաքինին՝
Սըրապիոն մանուկն, ի վանքըն սնանի.
Կրօնաւոր եղեալ ընտիր և անուանի,
Մինչ հայր և առաջնորդ վանացըն կարգի:

Ի թվականին հայոց ինըն հարիւրի
Կ և Ե տարի ւ ի նմայ աւելի

Ես Գրիգորիս նուաստ Աղթամարցի
Ապիկարըս տեսույ և անյիշելի
Ըզվարըս ընգնութեան սուրբ Մարիննոսի
Ոտնաչափ համառօտ ի յաւարտ ածի,
Զի ընթերցմամբ սորա զուարճանայք յոգի,
Զփառս երգեցուք փրկչին ամենագօրի:
Ան յոտըս երջանիկ րաբունապետի՝
Գրիգորիոս անուն արթուն հընկողի,
Քաջ հրուեռոր անյաղթ փիլիսոփայի
Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի:
Եւ որք եղանակէք ի մէջ հանդիսի
Եւ յիշման արարէք ըզմեզ արժանի,
Եւ ձեզ ողորմութիւն տեառնէն պարգևի
Ի սոսկալի աւուրն մեծ դատաստանի:

Ց

ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱԹԱՅԵՑՈՒՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ

Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան՝
Միխթար Բաղիշեցի, և աստուածածան,
Գընաց նա ի սահմանս Սաղրպատական,
Ի Ղում և ի չիրաղ և ի Խորասան:

Եհաս ի Սահարղանդ և ի Բուխարայ,
Եմուտ ի Հընդուստան և անտի գընալ
Ի մէջ հռչակաւոր քաղաքըն Խաթայ,
Որ մուշկն է պատուական երէոյ նաֆայ:

Խաթայ՝ մերձ սահմանաց Չինումաչինայ,
Եւ անդ լինի ոաւաւնդն չըքնաղ չինին գայ.
Անդ է նահատակեալ առաքեալն Թումայ՝
Հարեալ ի Մըշդինէ. այսպէս գըրեալ կայ:

Եւ են աշխարհն ամէն կռապաշտ հաւասար,
Ոչ ճանաչեն զորդի, սուրբ հոգին կամ զհայր,
Զանեղ աստուածութիւնք անձինք հաւասար,
Զստեղծողն արարածոց և ըզլոյսն անճառ,

Զիջումըն միածնին յերկիր հեզաբար,
Զմիաձնալն ի բնութիւնս, որ մարմին էառ,
Զբևեռիլն ի խաչին, զդժոխոցն աւար,
Նըստեալ ձօր ընդ աջմէ ի քրովբէից կառ:

Անտեղեակ ւ անծանօթ են այսըմ շնորհի
Աշխարհըն Խաթայու, զոր այժմ յիշեցի.
Չասեն զմիւս անգամ գալուստն Յիսուսի,
Որ կեանք և փրկութիւն է ամենայնի:

Եկեալ ի Խաթայու զօրքըն հեծելին
Եւ դէպ 'ի յարևելս չըւեալ գընացին.
Եւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին,
Զոր ի լեզուն իւրեանց ղալմուղ կոչէին:

Զմանկունքըն գերելոցըն վաճառէին,
Յորմէ առեալ տղայ մի Մըխիթարին,
Տանէր խընամք նորա զինչ իւր զաւակին.
Ապա դէպ ի յաշխարհըս մեր դիմեցին:

Ըզծով և ըզցամաք նոքա կոխեցին
Եւ յԱյանաց երկիրըն ժամանեցին.
Մատնեցին ըզտղայն երկրի իշխանին
Եւ նա ընչիւք իւրովք գընեաց երեքկին:

Բերեալ ի բուն քաղաքըն Մըխիթարին
Ջբարի մանուկն ընտրեալ և գառաքինին,
Հաճեալ հաւանեցաւ կամօքն իւրային,
Ասաց թէ՝ «Մըկըրտիմ յանունն Յիսուսին,

Հաւատամ ես ի հայրն և յորդի նորին,
Երկըրպագեմ հոգով հոգոյն ճշմարտին՝
Մի կամք և մի բնութիւն, որ ոչ բաժանին»:
Ջանունն Աստուածատուր նորա կոչեցին:

Ուսաւ լեզու և գիր նա վաղվաղակի,
Ծնորհօքն աստուածատուր և հոգոյն տեղի.
Անձամբն էր վայելուչ, բնութեամբըն՝ բարի,
Տեսլեամբըն՝ գեղեցիկ և զարմանալի:

Ըզնթացս երանելոյն տեսեալ սատանի,
Չհաւատն, որ ատ Քրիստոս զգընացսըն բարի,
Լինէր հեղձամղձուկ առաջին չարի,
Բորբոքեաց ըզնախանձ դառնութեան բոցի:

Ի չար նախանձ վառեաց զազգն Իսմայելի,
Թերևս յափշտակէ զծառայն Յիսուսի.
Դըրդեաց ի բարկութիւն զորդիսն Հագարի,
Ասեն ըզմանկանէն՝ Ջաւակ է թուրքի:

Գնացեալ առ ամիրայն չարախօսեցին.
Եկեալ՝ զԱստուածատուրն յառեան կոչեցին
Չարագործ պըղծասէրքն և որդիք ժանտին,
Նըման եբրայական տիրասպան գընդին:

Ասեն. «Դու՝ մուսուլման յազգէ Մահմետին,
Ի բաց թող զՔրիստոս և գհաւատ նորին,
Թէ ոչ՝ տանջեանք զքեզ սաստիկ ւ անագին»:
Ասաց. «Ես ոչ փոխեմ զլոյս ընդ խաւարին»:

Ետուր նա համարձակ զպատասխանին,
Թէ՝ «Քրիստոս է աստուած ւ ես ծառայ նորին,
Ինձ ուրանալ զՔրիստոս է անիրաւարին
Եւ կամ հրնազանդել ձեր փեղամպարին:

Պատրաստ եմ մեռանել վասն անուան նորին,
Այնմ, որ եբարձ զսուրբ մեր պատուհասին,
Էարբ նա զքացախ խառնեալ ընդ լեղին,
Եհեղ զարիւնն իւր սուրբ ի քառաթևին»:

Բազում թախանձանօք զնա աղաչէին
Քաղցրութեամբ խօսելով, և ոչ կարացին.
Կապեցին գձեռս ի չետս և հարկանէին,
Տանէր նա խընդութեամբ տանջանաց նոցին:

Յաւուրս ձրմերայնոյ զնա մերկացուցին,
Բերեալ գետն ի ներքոյ սառին անցուցին,
Որպէս սուրբ քառատունքն ի Սեբաստիին,
Անցեալ ընդ հուր և ջուր ըստ երգոյ Դաւթին:

Ապա ի թիկնամէջըն հուր վառեցին,
Հըրով ըզհողաթափն ի յոտն ագուցին,
Սըրով զբոլոր մարմինըն ծակոտէին
Եւ կայծակունս հրոյ ի չերկու ձեռին:

Ոչինչ նա համարէր զկսկիծն ահագին,
Սիրով էր նա վառեալ ի յոյսըն վերին.
Արիաբար եկաց դէմ Բէլիարին,
Եղև նա պատարագ հօրն երկնաւորին:

Բերեալ ըզբարեյաղթ վըկայն Քրիստոսի
Ետուն զնա ի մօլլան, զի օրէնք ուսցի.
Ասեն՝ Մանկութիւն է դորա փոխելի,
Դառնայ ի Քրիստոսէ սա վաղվաղակի:

Մօլլա գֆթ բա փսար. «Ա՜ սէիտզատայ,
Մաքուն գումըռահի, բամիան պիայ»[1]:
Ասաց թէ՝ Իմ աստուածն ըստոյգ է՝ Յիսայ,
Չի՛ չար ու չի՛ թատպիր, քի շաւամ ճուդայ[2]:

Մօլլա գֆթ քի. «Պիայ պըշաւ մուսուլման
Պըխաւաճ թու փէշի մա քըթապ ու դուռան»[3]:
Ասաց թե՝ Սրճոտի է քոյդ և ունայն,
Պէմաստի մաքուն, ճըճել ու ճատան[4]:

---

[1] Մոլլան ասաց տղային. «Ո՛վ սեհոի որդի,
Մի մոլորվիր, մեջտեղ արի» (պարսկ.):

[2] Ի՛նչ ճար, ի՛նչ ճնար, թե կբաժանվեմ (պ.):

[3] Մոլլան ասաց, թե «Արի դարձիր մուսուլման,
Կարդա դու մեզ մոտ գիրք ու դուրան» (պ.):

[4] Անմտություն մի արա, ո՛վ հիմար ու տգետ (պ.):

Մօլլա ոէտի. «Օլ կիլ փեղամպարայ եար,
Կավուրլարուն տինի կօնկուլտան չըխար»[5].
— Ի քեզ սաստէ Յիսուս, մէնտան իտրա[ր] վար,
Սալիպ մէ փարըստամ, մաննուն պէխապար[6]:

Սովով և ծարաւով յոլով տանջեցին,
Ի հուր և ի ջուր ըզնա անցուցանէին.
Ամիսս ութ անխնայ զնա չարաչարեցին,
Ծարժել ի հաւատոցն զնա ոչ կարացին:

Եկեալ ժողովեցան չարքն ի միասին,
Պատեալ շուրջանակի և քարկոծէին,
Քան զշուն և ըզգազան զնա գիշատէին,
Էառ զպսակն անդէն ի յասպարիսին:

Ամաց Էր տասն և ութ վըկայս գովելի,
Որ վկայեաց անուան տեառն Յիսուսի,
Էր թիւն ինն հարիւր վաթսուն և ութի
Յորժամ Աստուածատուրըն նահատակի:

Առ մեծ րաբունապետն ճառս այս յարմարի,
Որ և անուն նորա Գրիգոր յորջորջի.
Սորին ասպասաւորէ և աշակերտի՝
Գրիգորիս, մականունն է Աղթամարցի:

---

5 Մոլլան ասաց. «Արի մարգարեին բարեկամ դարձիր, Անհավատների կրոնը սրտից հանիր» (թուրք.):

6 ես պնդում եմ, Խաչ եմ պաշտում, ով անտեղյակ խենթ (թ., պ.):

4

ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱԹԱՅԵՑՒՈՅՆ

Ըստ (անուան երգողին ի Գրիգորիս Կաթողիկոսէ) Աղթամարցոյ

Գովեմք ըզվըկայն արի,
Զմանուկըն Խաթայեցի,
Եղեւ նահատակ քաջի,
Քաղաքըն որ Բաղէշ կոչի:

Րաբունւոյն երկնի 'ւ երկրի,
Եղեւ նա տուն և տեղի,
Վառեալ սիրովն Յիսուսի,
Ի հուր և ի ջուր տանջի:

Ի փըշոց նոր վարդ վառի,
Արմաւ և շուշան ծաղկի,
Բուրէ հոտ ըսքանչելի,
Լընու ըզքիմս ամենի:

Գունով ակըն գովելի,
Սուտակ, դահանակ, ոսկի,
Եկեալ ի յերկրէ հեռի
Պարգեւս 'մերս յեկեղեցի:

Որդիք Հագարու զարմին,
Եկեալ ըզքեզ ըմբռնեցին,
Այնչափ եւ սաստիկ հարին,
Ծարժել զքեզ ոչ կարացին։

Բամբք այլազգեաց գընդին,
Հարեալ զքեզ ի վայր արկին,
Կարկուտ յանխընայ ածին
Նոր բողբոջացեալ ծաղկին։

Ի ժամանակիս վերջին,
Դու նոր նահատակ փըրկչին,
Կոխեցեր զգըլուխ չարին,
Մըտեր ի հրեղէն արփին։

Սա ի բարբարոս ազգէ,
ԸզՔրիստոս աստուած ասէ,
Կամաւք զարին իւր հեղէ,
Զթըշնամին յամօթ առնէ։

5

ՏԱՂ ՎԱՐԴԻՆ ԵՒ ՊԼՊՈՒԼԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

Ծաղկունքն ասեն՝ Հերի՛ք արա,
Քանի՞ կանչես վարդին վերայ.
Կաճ ու պէկաճ ձայնըդ կուգայ,
Ի մեր պաղչից էլ ու գընաս։

Քանի՞ առնէք դուք ինձ յառաջ,
Սիրտս ի սիրու եղեր քաղաց.
Ես կու մաշիմ վարդին սապաց,
Իմ հալս առանց իրն է խարաբ.

Գամ իջանեմ վարդենոյն տակ,
Չկանաչ տերևն առնեմ ինձ յարկ.
Ի սրտիս մէջըն կայ կըրակ,
Թըռչիմ և գամ երագ-երագ.

Ի քեզ նայիմ աչօք անթարթ՝
Նա փարատի զինչ կայ հասարթ,
Գեղեցկութիւն դրախտին և զարդ,
Կարօտ են քեզ ամենայն մարդ:

Վարդըն կասէ՝ Պլպուլ, երգէ՛.
Քաղցըր ձայնիւ եղանակէ.
Ով որ ըզքո ձայնըդ լսէ,
Նա հիանայ, զմեզ երանե՛.

Ով ևեռգութեամբ առնէ քեզ նազ,
Թող իր աւուրքն դառնա ըլուազ.
Ամրի թուրայ պաշաթ դըրազ,
Պլպուլ, քըքաւ թու բա աւաջ[1]:

---

[1] Քո կյանքը թող լինի երկար,
Սոխակ, խոսիր դու երգով (Պ.):

Մուրդան քըֆտայնդ. ա՛յ պլպուլէ[2],
Քանի՞ կանչես, մէկ պահ լըռէ.
Ասաց թէ՝ Սէրըն կու ճեղէ,
Որ վրայ վարդին աշըղ եղէ:

Սիրտըս չկայ ճետս իւրըն ճերթ,
Քանի խոցէք ւ ասէք թէ՝ Ե՛րթ.
Հողմն շարժէ ըզվարդին թերթ,
Նա ի դողման դառնայ իմ լերթ:

Այլ չի մընաց քնաւ յիս ուժ,
Երբ հեռանամ, նա չուճիմ ժուժ,
Ինձ օր մահու լինի և գուժ,
Հոտըն վարդին է սըրտիս բուժ:

Ջօրըն կենամ յերերմընի.
Քունս է հատեր ի գիշերի,
Աղաղակեմ արտասուալի,
Յայգուս չերթամ ես այլ տեղի:

Ըռանկ վարդին որպէս ըզլալ,
Տեսաւ պլպուլն եղաւ պէհալ.
Անմահութեան հոտըն բուրեալ,
Նա ի սիրուն եղև արբեալ:

Վարդըն տեսաւ զպլպուլն ուրախ,
Որ ձայն կածէր ինքըն աճահ.
Միծաղեցաւ վարդըն մէկ պահ,
Պայծառացաւ տիպըն քան զջահ:

[2] Հավքերն ասացին, ո՛վ սոխակ (պ.):

Վարդը կարմիր գունով վառած
Նա շահ պլպուլը ձայն էած,
Հոտոյն եղև խև ու հարբած.
Վարդի տեսուն էր կարօտած:

Պլպուլն ասաց՝ Ես եմ առակ,
Թռչունքն կառնեն ըզիս կատակ,
Վարդը չնայիր ի յինքն յերակ,
Նա ի յաչացս ելաւ վտակ:

Զօրն ի ճըղոյն լինիմ ի կախ
Եւ միշտ դիտեմ զվարդին ըռահ,
Զով որ տեսնում՝ նա ինձ է մահ,
Զվարդըն քաղեն տանին անշահ:

Վարդն է զգեցեալ գունով հանդերձ,
Ուրախանամ, որ լինիմ մերձ.
Կասէ՝ Սիրով դու առ իս դարձ,
Զաճն և զերկիւղն ի յինէ բարձ:

Կասէ՝ Մի առներ դու ինձ հետ խաղ,
Ես եմ կարմիր որաղ-որաղ,
Ցօղն իջանէ յամպէ պաղ-պաղ
Վերայ վրանիս իմոյ խաղաղ:

Վարդըն կասէ. Զայնըդ քաղցր ած,
Ցիրինկվընէ ես եմ հարբած,
Ծաղկանցն ամէն եմ սար ու թաճ՝
Պայծառ գունով լուսաճաճանճ:

Ֆըրեաթ կառնէ ինքն յամէն ժամ,
Չկանայ փարտաս յետ կու բանամ,
Ըզքեզ տեսնում ւ ուրախանամ
Ի այլ ի քեզնէ ոչ հեռանամ:

Պլպուլն ըզվարդն կու գովայ,
Յիրիկվընէ ձայնըն կու գայ,
Ծաղկունքն ամէնն են քեզ ծառայ,
Դու թագաւոր և տէր նոցաՅ:

Պլպուլն զարթնի կէս գիշերին,
Վարդըն փթթի յառաւօտին.
Ցօղն իջանէ ի վերայ թփին՝
Պայծառանայ գեղըն վարդին:

Շուրջ ու բոլոր իւրենըն փուշ,
Հոտըն բուրէ վարդին աՅուշ.
Թըմրաւ պլպուլն, եղև պէուշ,
Ասաց՝ Ի՞նչ ժամ եղէ քեզ տուՃ:

Եմուտ պլպուլն ի վրան վարդոյ՝
Թ' Ես եմ գանգատ յամէն մարդոյ.
Բեր համբուրեմ ըզտիպն քո,
Որ դուրանայ ցաւըս մարմնոյ:

Ես չունիմ սէր հետ քեզ վաղուց,
Զգալդ ու զգնալդ քեզ ո՞վ ուսուց.
Դու ես աղուոր և վայելուչ,
Է՞ր կու խոցես զիս առանց սուՃ:

Ջոխ ու զգիշեր եմ ես ի տապ,
Եղէ աճշարժ որպէս ի կապ,
Լափած սրտիս ես դու շարապ,
Որ անացել է քան զարագ:

Ջայնէ պլպուլըն անամաչ,
Ասէ՝ Կենայ վարդըն կանաչ.
Ծաղկունքն ամէն ելնուն յառաջ
Այն զօրաւոր արքային քաջ:

Դու պատուական աղուոր ու թաո,
Լեզու չկայ առնէ քեզ ճառ,
Պայծառ գունով ես միշտ ի վառ,
Քո թշնամոյն սիրտըն քան զսառ:

Ի հետ վարդին քանի՞ դատիս,
Սիրով ճորա դու միշտ մաշիս.
Երբ նա քաղցրիկ ճայի ի յիս,
Ջլուարճանայ սիրտս և հոգիս:

Ես կու այրիմ միշտ կըրակով,
Թէ չտեսնում զվարդըն վրանով.
Է՞ր կու մերժէք գիս կարօտով,
Ես կու գովեմ զվարդըն ձայնով:

Կասէ՝ Չկայ ի քեզ արատ,
Վրայ աշխարհիս կենաս անհատ,
Ի փորձանաց կենաս ի զատ,
Դանաչ վըրան և կարմիր այտ:

Ցամէն ապաւի որ լուսաձար,
Պլպուլն ի վարդն ի սալամ գար,
Ղումրին քաղցրին եղաճակէր՝
Զվարդն և զպլպուլն ուրախ առնէր:

Հետ պլպուլին արա զըրուց,
Երբ որ գայցէ ինքն ի դըրուց.
Ուրախութեամբ ըզքեզ ընդուց,
Չնա որոշէ ի յայլ հաւուց:

Վարդն ի պլպուլն երբ խօսեցաւ,
Այլ տրտմութեան հոգ չի տարաւ..
Քանն թէ խընդաց ւ ուրախացաւ,.
Չի իւր սրտին սէրըն լըցաւ:

Եղև պլպուլըն թևաթափ.
Թէ՝ Ե՞րբ ածեմ ըզվարդն ի յափ,.
Քանի՞ ֆըղան կանչեմ անչափ,
Ի դէմ վարդին հարկանեմ ծաՓ:

Ի ձեր սըրտիդ դուք սէր չունիք,
Վասն այն զիմ ձայնըս չընդունիք..
Վարդըն կասէ՝ Մի աներ, հերի՛ք,
Ես կու կանչեմ ւ ունիմ կարիՔ:

Գերի Գրիգոր անյիշելի
Եւ անպիտան Աղթամարցի,
Սէր աշխարհիս սուր երկասյրի,.
Հոգիս նովաւ վիրաւորի.

Աստուածատուր Մեծոփեցի
Ցինէն խնդրեաց, և ես գրեցի.
Դուք ասացէք սրտով ի լի,
Ինձ և նորա՝ տէր ողորմի:
Թըւին հայոց ինն հարիւր
Եւթանասուն ւ երկու այլ իւր
Հազարացիք օրինօք թիւր
Զազգըս խանձեն որպէս ըզհուր:

6

ԳԱՆՁ ՈՒՌԸՆԿԱՐՈՒ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՆ
Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ

Գերակատար աստուած համայնի,
Տէր արարիչ երկնի և երկրի.
Որդին ծընունդ, բըխումն է հոգի,
Հարթ հաւասար անձինք եռակի:
Մի քան զմի յառաջ ոչ ասի,
Ոչ մին պահի կամ քըթթել կամի.
Թէպէտ անձինք յատուկ քարոզի,
Բայց բընութեամբ անքաժանելի:
Զի հայրն է լոյս, լուսոյն լոյս որդի,
Եւ փառակից ճշմարիտ հոգի:
Ծնունդ է հօր միածին որդի,
Չէ արարած ըստ Արիոսի:
Հոգին աստուած է միշտ կենդանի,
Անհատաբար ի հօրէ բըխի.
Բանիւ ստեղծեաց զքանանկքն անմահի.

Զգունդքն հրեշտակացն ի հրեղէն արփի:
Ստեղծեաց ըզմարդն ըստ իւր պատկերի
Եւ զարդարեաց շնորհօքն եօթնարփի.
Յեդեմական դրախտըն փոխի,
Արքայօրէն ի գահոյս բազմի:
Պատուէր առին վասն մի պըտղի,
Չի ճաշակել առանց հրամանի.
Չարեաց գիտակն ի յօձըն բունի.
Եւ ընդ նախաճօրըն մեր նա խօսի:
Թ' ով ճաշակէ յայն ծառոյն պըտղի,
Արքայօրէն նա աստուած լինի,
Եւ ճանաչել ըզչարն ու զբարի.
Նըմանւ լինել ձեր աստ ածողի:
Եւ խաբեցաւ կինն ողորմելի,
Գեղով պըտղոյն աչաց հաճելի.
Կերաւ Ադամ ձեռօքն Եւայի
Եւ յեդեմական դրախտէն հալածի:
Երկըրպագեմք խաչին Քրիստոսի
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Բամիցըս առէր նախնոյն արարող
Նա բարկացաւ, ասաց. Դարձ ի հող,
Քանզի չեղեր, ասէ, դու կարող
Կալ հակառակ եւ չարին յաղթող:
Տառապանօք տանջիք զերդ ըզգող,
Դրախտին եդեալ հրեշտակ պահեցող,
Եւ սերովբէք սուսերօք շրջող
Եւ հողեղէն բնութիւնս մեր կիզող:
Ի յուլբաթու վեց ժամըն կերան,

Ըզմահաբեր պըտուղըն անպիտան.
Եւ վեց ժամուն վեց հազար անցան,
Տառապանօք ճոցա տանջեցան:
Մինչ առաքէ հայր յերկինր ըզքան,
Էառ մարմին գայ ի չարչարան.
Եղեալ մարմնով ի փայտըն խաչին,
Խոնարհեցաւ ի հող և ի տապան:
Փառօք յարեաւ տէրն անապական,
Առաքելոցն եղեալ յանդիման.
Յարոյց ընդ իւր զմահուն պարտական
Ճոխ և փարթամ ի յերկինս եհան:
Դասք երջանիկք գունդքըն սրբազան
Քարոզք բանին ի յաշխարհս ելան.
Որք ի ճոցուց ըզքան ընկալան.
Եւ յորդին աստուած հաւատով դարձան:
Նոր պատուիրան առին և ընշան,
Դրոշմ և օրէնք, ի կրոց դարձան.
Որպէս զԿղոդիէ Հոռոմոց արքայն,
Պատրոնիկէ կինն իւր պատուական:
Յառաքելոյն Պետրոսէ ուսան
Զգալուստ փըրկչին և մկրտեցան:
Տճօրէնութեան տեղաց ցանկացան,
Եւ սիրածին կուսին մաքրական:
Եկեալ դըշխոյն սիրով ջերմական
Երկրպագէր տեղաց սըրբութեան.
Խընդրեաց ըզխաչըն տէրունական,
Որ կենսատու է ազգի մարդկան:
Դուստր արքային էառ անդ վաղճան,
Ճնորհօք խաչին դարձաւ ի կենդան:

Երկրպագեմք խաչին Քրիստոսի
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Ի փրկական փայտէն հրաշանաց
Դըշխոյն սիրով, հաւատով խընդրեաց,
Տեառնեղբօրէն ըզմասն աղերսեաց.
Ընձին եհաս և փափաքանաց:
Տարեալ կայսերն ըզնա ընծայեաց
Զոր հաւատով նա երկրպագեաց.
Երեք հարիւր ամ անդէն մընաց,
Յազգ և ի տունըս թագաւորաց:
Ի յարմատոյն բուսեալ յայն բարեաց
Սուրբն Հոիփսիմէ կոյսն ի յազատաց,
Առեալ թօշակ իւրն ի հայրենեաց,
Զաստուածընկալ ընշանըն կենաց:
Յարևմըտից արև մեզ ծագեաց,
Սուրբ ընկերօքն իւր ի Հայս դիմեաց.
Եկեալ հասեալ կոյսն ի գովելեաց
ՅԱրքական գաւառին Մոկաց:
Ունէր ընդ իւր զընշանըս կենաց,
Որ զարարածըս լուսաւորեաց.
Զմինըն պարգևս տըւեալ նա Մոկաց,
Զմիւսն ի Վարագ տարեալ ամփոփեաց,
Գիւղ ի Կրճաւ խաչըն դադարեաց,
Դեւքն յաղթերէն իսկոյն հալածեաց.
Մանկունքն, որ խեղ յոտից ՚ւ ի ձեռաց,
Բըժշըշկեցան խաչիւրն շնորհաց:
Երկրպագեմք խաչին Քրիստոսի
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Գովեալ նշան փառացն Յիսուսի,
Մահուամբ ըզկեանքն ծածկեալ յինքն ունի.
Որ յերգագիր իմաստնոյն տառի
Հոգիանիւթ հուսանաց շնորհի:
Նախանըկար դիտմամբ հրաշալի
Զքեզ, փայտ կենաց, ասաց ամենի.
Օրհնեալ է փայտ, որով կատարի
Արդարութիւն ի վերայ երկրի:
Կեցեալ սուրբ խաչն յիշխանաց յերկրի,
Ծառ ժամանակ առնէր աքանչելի.
Ոմն երկիւղած և առաքինի
Սպասաւորէր սրբոյն նըշանի.
Հրեշտակն ազդեաց տեսլեան գիշերի,
Գընալ յերկիրըն Քաջբերունի,
Բերեալ զգանձն անկողոպտելի,
Գըտեալ ձորակմանդ ծառ մի ունի,
Նըշանըն սուրբ անդէն ամփոփի:
Ումեք չասաց այրն այն ցանկալի
Թէ ուստի գայ կամ զինչ նա ունի.
Մերձեցաւ օրն իւրոյն վաղճանի,
Սուրբ երջանիկ հօրն երանելի.
Եցոյց զտեղիք սրբոյն Նըշանի,
Զոր ամփոփեալ էր յուռի ծառի:
Զտեղն արարին ուխտ ըսքանչելի,
Ուռընկարու սուրբ Նըշան կոչի:
Երկըրպագեմք խաչին Քրիստոսի
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Ունող յաղթութեան զօրեղ սուրբ Նըշան.
Դու քառասար սուսեր սրխրական,
Դու խորտակող գրնդին դիւական,
Գառին աստուծոյ ընշմարիտ սեղան:
Դու դրրատեալ պանծալի Նըշան:
Սիրասարան անսայթաքական,
Դու լաստափայտ ապաւինութեան
Ցալեաց մեղաց պահես անսասան.
Դու նազելի անպատում Նըշան,
Ուրախութիւն ես ազգի մարդկան.
Խոստովանեալ ես խորհրդական,
Կենաց Կարապետ յաւուր գալըստեան.
Ի քեզ ձօնեցաւ քանըն հայրական,
Ի քէն սարսի գունդ բելիարեան.
Քեւ ճանապարհք ի յերկինս բացան,
Մարդ և հրեշտակք խառնեալ միացան.
Երկիւղածաց եղեր դու նըշան,
Չի արասցես չարին աղեղան:

Բաբունոյն դու սուրբ դիտարան,
Մեզ՝ ծառ կենաց և նոյեան տապան,
Տուն աստուծոյ, սանդուխք յակոբեան,
Եւ Մովսէսի զօրեղ գաւազան:
Դու ահարկու առակալի նըշան,
Հզօր աշտարակ անկասկածական.
Առ քեզ պաղատիմք մեք ամենեքեան,
Ուրնկարու յաղթող սուրբ Նըշան:
Հրաշագործես դու միշտ անխափան,
Քաջքերումեաց պարծանաց նըշան.

Ախտաժետաց դեղ առողջութեան,
Ուղընկարու գովելի Նըշան:
Նեղեալքն յայսոց անկեալ առ քեզ գան,
Քաջքերունեաց պատուելի նըշան.
Արա ըզդեւքն հալածական,
Ուղընկարու ցանկալի Նըշան:
Բազկատարած կան ամենեքեան,
Բեկեալ սրտիւք կան քեզ յանդիման:
Երկըրպագեմք խաչին Քրիստոսի
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Ի քէն հայցեմք միածին որդի,
Ունիմք բարեխօս զխաչ քո սքանչելի,
Ներկեալ արեամբըդ կենարարի.
Յարարածոց միշտ երկըրպագի:

Սա զէն և սուր է անյաղթելի,
Հարեալ ի սիրտըն Բելիարի.
Ի քէն ելցէ շնորհքն յաշխարհի,
Զի տէրն աստուած ի քեզ բընակի.
Փըրկիչն քեւ առ մեզ իջանի,
Ցաւք և ցընորք ի մէնջ հալածի.
Ժողովեալոցըս տէրն ողորմի,
Որք են եկեալ տունըս Խաչի.
Կատարեսցին խընդիրքն ամէնի,
Օրհնեն զտըւողն այնըմ շնորհի:

Յիշեա, եւ եւս, զան(ձինս):

Սուրբ եւ մաքուր կոյս երանուհի
Անախտ անբիծ մաքուր հայելի,

Դու ծովային ակըն մարգարտի,
Եւիլատայ պատուական ոսկի:

Անփորձ յառնէ ծընող Յիսուսի,
Կոյս Մարիամ՝ պարծանք Եւայի:

Խրրատուացիր, կոյս երանուհի,
Հօր հաւա(սա)ր ես դառանելի:

Թագաւորին ես իջման տեղի.
Ուստի երկինք՝ւ երկիր սասանի:

Արձանուհակ լեառնըն յերկրի
Զոր Դանիէլն յառաջ տեսանի:

Մանանային սափոր ոսկալի,
Կընքեալ տօմար անընթեռնլի:

Աղբիւր կընքեալ ջրոյն կենդանի,
Սէզ եւ գրզաթ երկնային ցօղի:

Րոտեմք աղերսիւ ի քէն սրբուհի,
Չի գիր մեղաց մերոց ջընջեացի:

Ցօղ արտասուաց յորդաբուխ հոսի,
Քո միածնի կամքն քաղցրասցի:

Ի գալըստեան աւուրն ահեղի,
Յորժամ գոչէ փողըն հրաշալի,

Մեզ բարեխօս և միջնորդ բարի,
Ընդ քեզ և խաչըն համաձայնի:
Զայն Յովանու, Պըսակըն նախնի,
Պարթև Գրիգորըն Պահլաւունի,
Գանձիս խնդրողի մասն ի պարգևի,
Վարժապետին մեծին Գրիգորի:
Մատիր յաղերս դու կոյս սըրբունի,
Խաղաղութիւն շնորհել աշխարհի: Ողորմեաւ:

7

ՄԵՂԵԴԻ ԱԶՆԻՒ

Խաչին Նուընկարու

Խոստովանիմք զՄիածին
Բարձրեալ ի խաչափայտին.
Եւ մեզ նըշան լուսածին,
Որով յաղթեմք բանսարկուին:

Այսօր տօնեմք սուրբ Խաչին,
Աստուածընկալ Նըշանին,
Որ է բացող դըրախտին:
Գալոց է յաւուրըն վերջին:

Զըքնաղ լուսով զարդարին,
Ամպօք ընդ առաջ թըռչին
Երկրպագուքըն Խաչին,
Խաչեալ սուրբ թագաւորին:

Ի յայն աւեղ ատենին
Տօնողքս ի քեզ ի յանձին,
Ցանցանք մեղաց մեր ջընջին,
Դասեալ ընդ սուրբ երամին:

Ի հօրէ խոնարհեալ իջանի
Ծոցածին միածին և որդի.
Անմարմինն ի մարմնի երեւի,
Եւ կամաւ ել ի կառըս Խաչի:

Խափանեաց զզօրութիւնը չարի,
Եւ քարոզս առաքեաց աշխարհի.
Զաշակերտս իւր ընտրեաց աքանչելի.
Եւ մեհեանքըն կոց խափանի:

Նոր օրէնք և հաւատք հաստատի,
Ընդ բոլոր արարած ըսփրռի.
Գընացեալ Շըմաւն Պետրոսի
Ի քաղաքն ի Հրոմ հանդիպի:

Դըշխոյն սուրբ և ազքայն հաւանի,
Հաւատաւ ի Քրիստոս կենդանի.
Եկ ի տես սուրբ տեղաց տենչալի
Եւ ետես ըզծընողն Ցիսուսի:

Բախացեալ դըշխոյին ի յոգի
Եւ խընդիրք արարեալ սուրբ Խաչի,
Զոր տեսեալ ըզհրաշքըն յայտնի,
Մասն առեալ և ընտիր պիտանի:

Որպէս գանձ և պարգև ըստանձի.
Եւ մընայ սուրբ Նըշան յարքունի.
Միշ ի կոյսըն չքնաղ նազելի,
Հոիփսիմէ հարսնացեալ Յիսուսի:

Յարքայէն ամբարիշտ նա փախչի,
Ընկերօքն իւր ամբիծ ի մարմնի,
Եկն յերկիրըն Մոգաց գաւառի
Եւ ետ պարգև ըզՆըշան տէրունի:
Ասացեալ Գրիգորիսըն գերի,
Որ կապեալ կայ մեղօք ի տոռի.
Հրամանաւ րաբունւոյն Գրիգորի,
Զնա առնէք չիշեղոյ արժանի:
Եղանակողք գանձիս և տաղի,
Ժըրաջան կանգնողացդ յառեանի,
Միաբան դուք ասէք ողորմի.
Մըկրտիչ անարժան գըծողի:
Եւ զանկեալքն ի յայտոցըն չարի
Գըթասցի ողորմածն ամէնի,
Նըշանաւ սուրբ խաչիս քըժըշկի
Եւ օրհնեն ըզտըւողըն շնորհի:

ՅՈՐԳՈՐԱԿ Ը

Վառեալ լուսով աստուածային
Փայտըն կենաց սըրբոյ Խաչին
Թագ և պըսակ նախաստեղծին
Եւ խորտակող դիւաց գըլխին:

Առ քեզ եկեալ եմք վըշտագին,
Մաղթեմք զՆշանդ աստուածային
Ի քեզ գենեալ գառն երկնային
Մածեալ արեամբ Կենարարին:

Բամեալ ժողովս ի միասին
Հայցեմք քէն կողկողագին,
Զի գիր մեղաց մեր ջընջեսցին
Ընդ երանեալ աւազակին:

Դուռըն մըտից դու երկնային
Եւ կարապետ յորըն վերջին
Երկըրպագուքըն քո բերկրին
Լուսազգեստեալք եւ պըսակին:

Ամենազօր Նըշան փրկչին
Երկըրպագեմք քեզ ի գետին.
Զի դու բարձող ես արարչին
Մաքուր սեղան երկնից հացին:

Նորոգ ձայնիւ ըսքանչելին
Օրհնեմք զՆըշանդ տէրունի,
Առողջութիւն տաս հիւանդի,
Լընուս զփափաքըն ամէնի:

Աստ մեզ պարծանք ի յաշխարհի
Ըստ առաքելոյն Պօղոսի
Ի միւսանգամ օրըն վերջի
Դու բարեխօս միջնորդ բարի:

8

ՆՈՐԻՆ
ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Մարմինս ըզհոգիս գրկէ
Եւ պահէ զօրըն լալական,
Դատաւորին լալով ասաց,
Թէ՝ Արա ուղիղ դատաստան:

Ստուած երբ ըզմեզ ստեղծեաց
Եւ ի քեզ արար ապաստան,
Թէ դու իրաւունք արա,
Որ սոքա լինին միաբան:

Դատաւորն անիրաւ էր գեմ,
Ոչ առներ ուղիղ դատաստան,
Ահ ի աստուծոյ չունէր,
Անպատկառ ի յորդոց մարդկան:

Եղուկ զիմ այրի հոգիս,
Ծար չունի քան զանմահ փեսայն:
Միայն է դարձեալ գերիս
Ընդ հեռացեալսըն վայրենական:

Ի մեղաց իմոց տանջիմ
Եւ կենամ միշտ ի յերեսման,
Հոգիս ի մարմինս կուլայ,
Հակառակ եմ՝ չեն միաբան:

Ոչ դուր, ոչ դադար առնում,
Այլ շրջիմ ես թափառական,
Ոչ ունիմ տեղ՝մ ես դարան
Կամ աւուր մ՝ երկու ապաստան:

Գրիգորի՛ս, ճարակ արա
Եւ զմեղաց աղտն ի քէն լուա.
Է՞ր անհոգ ի քուն կենաս
Յանցաւոր աշխարհիս վերայ:

Ահա օր մահուն կուգայ
Գի՛տ բժիշկ և ճար քեզ արա,
Յէգուց հրաւիրակըն գայ
Եւ ասէ քեզ՝ Աստի գնա՛:

9

Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Գանգատ առնեմ սիրով քեզ,
Թէ միտ դընես ու լըսես,
Զծառայս քո անտես չառնես,
Զխորհուրդ սըրտին յայտնեմ քեզ:

Բարուճարար խըրատես,
Զյիմարս ի յիմաստ ածես,
Զցրուեալս դարձեալ ժողովես
Թևօքըդ քո ամփոփես:

Ի քէն թէ գիս բաժանես
Ի այլ զքո գերիս ոչ յիշես,
Յինէն զերեսդ շրջես,
Զիա՛րդ կենդան կենամ ես։

Գիշերըն մինչ ի լուս ես,
Տապիմ և տոչորիմ ես,
Վախեմ թէ մեռանիմ ես
Ի քէն հեռի և անտես։

Որպէս ըզջուր գնամ ես
Ի ի տեղ դադար չառնում ես,
Ղարիպ կենօք շրջիմ ես,
Կեանքս է հարամ, թէ գիտես։

Բամից եղբարց պարծանք ես,
Զամենեսեան ըսփոփես,
Ընդէ՞ր արիդ գիս անտես,
Որ հանապազ տանջիմ ես։

Իմ կեանքս է դառն ու դիժար,
Ողբամ ես միշտ ՚ւ անդադար,
Մեղօք եմ վիրաւորեալ,
Անկեալ ի յախտ չարաչար։

Սաստիկ սըրով խոցեցայ
Ի բանսարկուէն անիրացայ,
Յարատ նայիմ յարակայ
Հոգիս կըրկին ախտանայ։

Էղբարք ատ ձեզ պաղատիմ,
Թողութիւն խնդրէք վասն իմ,
Բազում յանցանս ես ունիմ,
Տարակուսեալ զի՞նչ չինիմ։

10

ՏԱՂ ԱՆՈՒՇ

Այբէն միշչև ի Քէն քեզէ գանգատիմ ես,
Բաներս ես ո՞ւմ ասեմ, երբ դու լըսել չես.
Գրիգոր մեծ րաբունի՛, այս գըրեցի ես,
Դուն ատ ու քընձէ զիմ գանգատս ու տես։

Ես եմ տարակուսեալ ի յայս աշխարհիս,
Զինչ բոյսն աշնանային գարնան մընամ ես.
Էթէ բան մի դալատ ի գիրըս գըտանես,
Ըստ քո սուրբ խորհըրդոյդ, որ զինքըն ջնջես։

Թէպէտ և կարդացող անուն ունիմ ես,
Ժամուս միտքս է մոլար, ինձ մեղ չի դընես,
Ի քեզ ելի ծարաւ, թէ արբուցանէս,
Լուկ զջուրդ թաքուցեր, թէ պապակիմ ես։

Խոնաւ հաւու նըման անտուն գիտեմ զքեզ,
Ծիծեռնեկի նըման լուկ բուն կու շինես,
Կանաչ դաշտիդ նըման պայծառացեալ ես,
Հրովդ անշիջելի ու այրեցայ ես։

Զայնիւ աղաչեցի, թէ այրեցայ ես,
Ղօղեալ չինէն թաքեար, թէ մեռանիմ ես.
Ճըրագ անշիջելի ի վառ էի ես,
Մուծեր ընդ գրուանաւ, թէ շիջանիմ ես:

Յորդոր գետոց ընման անհուն գնայի ես,
Նաւաբեկի ընման ընկըղմեցեր զիս.
Շրթամբք աստուածային համբուրեցեր զիս,
Որպէս ձուկըն ի ծովին՝ դու սընուցեր զիս,

Հրկայր մարդ հողածին, որ արգելոյր զիս,
Պատկերըն նայելով կանգնեցուցեր զիս:
Ջեռեալ և ջերմացեալ քո սէրդ իմ սրտիս,
Ջրամկական սերմանց քո սէրդ իմ աչերս:

Սիրամարգի ընման սաւառնացեալ ես,
Վարդի թըփի ընման ածլաս հագեր ես.
Տընկոցըդ խընկենոց անուշահոտ ես,
Բամ դրախտին ծառոյն ընման ծաղկեալ ես.

Յօղեա՛ զանձրև կենաց, գարնան ընման ես,
Խիճեալ դու պարծեացիս, թէ արեգակն ես,
Փոխանակ քեզ ընման յաշխարհս չըգտայ ես,
Քանզի յայբէն կու գամ՝ քեզ ընման դու ես:

11

Ի ԳՐԻԳՈՐԷ ԱՂԹԱՄԱՐՑՒՈՅ ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ,
Գերազարդից յոյժ մերձակայ,
Գընայ յօրէնս տեառըն խոնկայ
Գանձիւ գըրոց միշտ ճոխանայ:

Րենականաւ լըցեալ լուսոյ,
Րամեալ տառից հըրաշման ճոյոյ,
Րաբունաբար 'ստ առաքելոյ
Րամեալ զբոլոր անդամս մարմնոյ:

Իմաստութեամբ, մաքուր հոգւով,
Ի տընկողէն կարգեալ պըտղով,
Ի վնասողէն եւ յապականով
Եւ գիտութեամբ՝ որպէս ըզծով:

Գոչեմ յականջս որպէս Կեփաս,
Գեղապաճոյճ բնութիւնս որ այս,
Գերընդունէ սիրով դու զայս,
Որպէս փըրկիչըն քո զլումայն:

Որ եւ ըղձիւք զսիրտս յօժարէ
Ուստի տենչայ զքեզ տեսանէ,
Որ ներգըրեալըս վկայէ,
Եւ քեզ յայտնի կացուցանէ:

Րոպէից մատամբըք կառափ,
Րամեալ ի մի գումար և յափ,
Րակերտողին յորձան ի թափ,
Րաբուն վերնոցն ես դու անխափ:

Իսկ գըրեցաւ բանքս ի քարտի
Յազգիս թըւոյ, որ ըստ հայի,
Յինըն հարիւր եւթանասնի
Երեք ընդ նա այլ շաղկապի:

Սուրբ և մաքուր հայր պատուական,
Ազգի պարծանք և անընման,
Յոյժ փափաքիմ քո սուրբ տեսլեան,
Քո անառակ որդիս անբան:

Երգեմ ձայնիւըս նըւաղէ,
Մոլորական եմ ի տանէ,
Գրիգորիսէ սա գըրեալ է,
Ի թափառնիկ ոմն աղքատէ:

12

ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՅԱՂԹԱՄԱՐՑԻ ԳՐԻԳՈՐԻՍԷ ԱՍԱՑԵԱԼ

Անեղին տաճար,
Բանին քարերար,
Գերագոյն գովեալ, տիրամայր,
Դու յամէն լեզուէ:

Երգեաց Գաբրիէլ,
Զաւեղն Մաւուէլ,
Էացաւ ի քէն, տիրամայր,
Ընկալաւ մարմին:

Թագաւորին մայր,
Ժառանգորդ եղար,
Ի քո միածնէն հայցեա՛, տիրամայր,
Լոյսն ի մեզ ծագէ:

Խնամօք խընամէ,
Ծածկոյթիւ ծածկէ,
Կեցո՛ ի չարէ, տիրամայր,
Հովանաւորէ՛:

Զայնիւրդ ձայնէ՛,
Ղաւքարմամբ վառէ՛,
Ճգնութեամբ պահէ՛, տիրամայր,
Մեզ առաջնորդէ՛:

Յորժամ գալ յերկնէ,
Ընտեալ դատ առնէ,
Շնորհօք զմեզ քաւէ, տիրամայր,
Որպէս վայել է:

Չարն ի մէնջ մերժէ,
Պատուեալ պըսակէ,
Զահ լուսոյ վառէ, տիրամայր,
Ոհահ, որ յերկինս է:

Սուսկալի սրովբէ,
Վեհ քան ըզքրովբէ,
Տօնողացս օգնէ, տիրամայր,
Րամիցըս լսէ:

Ցաւն ի մէնջ մերժէ,
Ինծեալ պըսակէ,
Փրկեա՛ ի վտանգէ, տիրամայր.
Քեզ փառք ի յերկնէ:

Ով եղանակէ,
ԶԳրիգորիսն յիշէ,
Զփոխարենն առցէ հատուցման
Նա ի Քրիստոսէ:

18

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

Արքային փակեալ պարտէզ,
Մորենի վառեալ անկէզ,
Գեղմն իմանալի և. սէզ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Բարձող արարչին էից
Նըմանեալ եղեր երկնից,
Պարծանք ամենայն կուսից,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Գարնան առաւօտ եղեալ,
Արեգակն ի քեզ ծագեալ,
Ծող և ճառագայթ իջեալ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Դու լուսին յարև մերձեալ,
Էոյսն արեգակնէն առեալ,
Ջխաւար գիշերին մերժեալ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Երևեալ ծաղիկ գարնան,
Վարդ և մանուշակ, շուշան,
Նարդոս ւ ի քրքում ընման,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ջրկեալն ի յանճառ լուսոյն
Վասն օձապատիր պղտոյն,
Կեանք տրուաւ ի քէն նախնոյն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էրգ ձոր օրհնութեան ընդհեն,
Հոյլք հոգէղինացն երգեն,
Հրճուեալ բերկրանօք պարեն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ընդ անմարմնական զօրաց
Ցընծան դասք տեսանողաց,
Ջի կատարեցաւ առածն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Թէպէտ կամ ի ձիջ ւ ի քուն,
Բայց ունիմ ըզսիրտս արթուն,
Վառեալ կամ ի քո սիրուն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ժամ է փեսային գալոյ,
Երգեցէ՛ք զերգըս սիրոյ
Վասն ցնծութեան մերոյ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Իջեալ փեսան առ ձոսին,
Տեսեալ և ուրախ լինին
Օրիորդք հարսնարանին,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Լուսափայլ ամպ ես թեթև,
Հեղեր ի լերկիր աւձրև,
Ետ մեզ զանապատ պարգև,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Խորան կազմեցար լուսոյ,
Դու ոսկի բուրվառ խընկոյ,
Քիմք ես հաւատոյ մերոյ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ծառ արմաւենի ծաղկեալ,
Ի տանձ աստուծոյ տընկեալ,
Պըտուղ քաղցրահամ բերեալ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Կընդրուկ և զըմուռ հալուէ,
Անճառ հոտ ի քէն բուրէ,
Նիւթ քո ի կենաց ծառէ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Հոտ քո զանազան ծաղկանց,
Գուն առեալ յարեգականց,
Ձիս արա՛ լուսաթափանց,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Զայն տուր ինձ, ո՛վ տարփալի,
Մարմինս իմ նուաղեալ մաշի,
Սիրով ծարաւիմ յոգի,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ղամբար վառեալ լուսաւոր,
Խորհուրդ ծնընդեան քո խոր,
Սքանչելի չըքնաղ և նոր,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ծոխ և ճառագայթ քազմիս,
Ընդ դասս անմարմնոց հրճուիս,
Փրկեա՛ ի հրոյն գհոգիս,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Մաքուր աղաւնի, տատրակ,
Սիրամարգ ոսկէտեսակ,
Գարնան աւետեաց գուշակ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Յակինթ, դահանակ գունով,
Սարդիոն, յասպիս լուսով,
Ծափիւղայ, զըմրուխտ ցեղով,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Որոնենաց ծաղիկ պայծառ,
Պտղոյն անմահին դու ծառ,
Ծընար զմիածինն անճառ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Ծնորհօք սուրբ հոգոյն ամբիծ
Դու տախտակ աստուածագիծ,
Գուշակեալ մարգարէից,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Ուրախ լիցուք մեք ի քեզ,
Ուղղութիւն սիրեաց ըզքեզ,
Կենաց հոտ բուրեալ առ մեզ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Չըքնաղ վայելուչ մարմնով,
Լըցեալ մեծագին իւղով,
Զիս հաստատեսցես յուսով,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Պապակիմ առ քեզ, յոգի,
Հոտ իւղոց ի քէն բուրի,
Հոգիս իմ խանդաղատի,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս։

Ջըրհոր կենդանի ջրոյ,
Զպասքեալ ծարաւիս արբո՛,
Զթըմրեալս ի մեղաց զարթո՛,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ոսկիհն լուսեղէն քացող,
Յառագաստ երկնից բազմող,
Մեզ ողորմութեան տլուող,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Սիրալիր պըտուղըն Յիսուս
Ի քէն կթեցաւ, սուրբ կոյս,
Մեզ միշտ բարեխօս և յոյս,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Վայդ ես, տիրուհի, ծաղկեալ,
Պըտուղ ի ժամու տըւեալ,
Զհացն որ ի յերկնից իջեալ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Տունկ յաննմանական դրախտէն
Բուսեալ ծաղկեցաւ ի քէն,
Զմայլեալ արբեցոյց զամէն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ոամեալ հոտ ծաղկանց բուրեալ
Յանթառամ ծաղկէդ առեալ
Դու ի յարփենից վառեալ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ցընծա՛ բերկրալի շըքեղ,
Լուսին ընդ ոտիւք տըգեղ,
Զգեցար զարեգական աւեղ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Իիւծեալ բնութենէս թափուր
Միայն ընտրեցար մաքուր,
Ընկա՛լ զաղաչանս և լո՛ւր,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Փառօք զարդարեալ պըճնիճ
Օրիորդք հարսնարանին,
Զերդ ըզբուրաստան ծաղկին,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Քընար քաղցրախօս հընչեն,
Յերգս և ի խընճոյս պարեն,
Օրհնութիւն կուսին երգեն,
Տաճար լուսոյ մայր և կոյս:

14

ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Տապանակ կազմեալ աննուռն,
Կըտակին փառաց աննուռն,
Ընտրեալդ ի բիւրուց դու զուռն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էջեալ ճոտ անձառելի,
Խոնարհեալ բուրվառ էտ ոսկի,
Հուրն աստուած ի քեզ վառի,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Բոտմամբ պաղատիմ կուսիդ,
Վասն իմ աղաչեա զորդիդ,
Որ ես ճրեղէն արփիդ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Գրեալ մակագիծ կընտակ,
Սափոր մանանին ունակ,
Բղխեալ յԵդեմայ վըտակ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Բաբունոյն Եդեմ ծաղկած,
Մեզ պատճառ եղեր կենաց,
Լըցեր զԵւայեան առածն,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ի յերկրաւորաց նիւթոց,
Թափանցիկ լուսոյն օթոց,
Զճուրըն ծըրարեալ ի ծոց,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Գաւազան Ահարոնին
Ծաղկեցաւ ի խորանին,
Գուշակէր ըզծնունդ քոյին,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ուրախ եղև մայրն Եւայ՝
Անմարմինըն մարմնանայ,
Չխաւար մեղացըն քաւնայ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Բախացիր, Ադամ, հայր մեր,
Փըտեալ հընացեալ դու ծեր,
Քեզ նոր նորոգող եկեր,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ի յերկինս առեալ դասէ,
Զգերեալքն ի սատանայէ,
Ծընեալն յանարատ կուսէ,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Սոսկալի աւուր մեծին
Լեր մեզ բարեխօս կրկին,
Անարատ աստուածածին,
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էկեալ առ ձեզ պաղատի
Գրիգորիս Աղթամարցի,
Ասացէք մեզ ողորմի,
Կրկին ձեզ պարգևեացի:

ՏԱՂ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ԱՍԱՑԵԱԼ Է

Արեգական արդարութեան
Բացաւ մեզ դուռն ողորմութեան,
Գերագոյն քան զբնութիւն,
Դիմեալ երթամք յԵրուսաղէմ.
Երջանիկ հօր միածին(և),
Զարհուրեցոյց զպահապանս,
Էական աստուածութեան
Ընտրեաց գիւր սուրբ զառաքեալսն,
Թուլացան չար խորհրդով,
Ժողովեցան աստուածապապանքն.
Ինքըն է տէր, ինքն արարող:
Լռեալ չիսօսէր առ Պիղատոս.
Խորհրդոց ոչ իմաստրումն
Ծառայապէս կատարեցին,
Կատարեցան կամքն արարչին.
Հիւսունք գերին փայտս կոփեցին,
Զևեցին խաչաձևման,
Ղամբար փայլած ջահ վառեցին,
Ճրմլեցաւ տէրն ի խաչին,
Մատունքն ի փայտս բևեռեցին,
Յիններորդ ժամ ուրբաթին
Նա աւանդեաց առ հայր գիոգին:
Ծուրջը պատեցին ըզԳողգոթայն
Ոդորմելի ազգն հրէից.
Չհաւնդուրժեալ վարագուրին

Պատառեցաւ վերուստ ի վայր
Ջուր և արիւն ի սուրբ կողէն
Ոսկի գործեաց զարդարութիւն:
Սուրբ խնկով, սուրբ կտաւով,
Վարշամակով պատանելով,
Տարեալ դրին աւագ քեմին
Բաբունեաց սուրբ վարդապետն,
Ցնծացաւ Երուսաղէմ
Ի հաւատացեալքն ուրախացան:
Փառք ընդհանուր և սուրբ հոգւոյն
Քրիստոսի տուք օրհնութիւն:

16

Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑԻՈՑ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ

Գովեմ ըզքեզ, մարմնով հրեշտակ,
Բարի արմատ՝ սուրբ յիշատակ,
Ցորթոյն կենաց տունկ բարուրակ,
Ի գնացըս ջուրց հոգւոյն վըտակ:

Բամեալ ատեղունք ոստ ճախարակ,
Բողբոջախիտ երփնագունակ,
Ոսկէճաճանչ վարսագիսակ,
Խայծեալ ողկոյզ, հաւմ քաղցրունակ:

Իբըր խրճձոր մի ի ճղի,
Գուճագեղեալ ազգի ազգի,
Տերևապատ քօղեալ ծաճկի,
Հուռն ի ճմաճէ արտաքուրի:

Գուճով ես դու պըտուղ քարի,
Ծառ քո ի դրախտն որ յԱդենի,
Ադենն է մերս եկեղեցի,
Որ ի հոգւոյն առոգանի:

Որակն աճումըն հասակի,
Որ չեմթակայն տեղակալի,
Տերևն է զգեստ պատմուճանի,
Պատշաճաւոր ըստ կըրօնի:

Բաբո՛ւն, համբաւ գործոյդ քարի,
Որ ոչ թաքչի ընդ գըրուանի,
Կամ հոտ ածոյշ ըստ Պաւղոսի,
Բուրեալ ի փառըս Քրիստոսի:

Խակ մուտն ի քեզ մաճկաճացուի,
Որ և երկուքըն շաղկապի,
Անտի և ելն է աճմաճի,
Լուծեալ կապիմք աճլուծելի:

Սիրով քո սիրտս իմ տոչորի,
Նուաղեալ մարմինս այլագունի,
Կամ տարակոյս չայամ աշխարճի,
Ծըփամ չալիս մեղաց ծովի:

17

ՆՈՐԻՆ
ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Դու ես յԱդիճայ դրախտէն,
Զոր տընկեալ աջն անեղական,
Կենաց ծառ ծաղկեալ ես դու.
Վարսաւոր սրովբէն պահպանեալ:

Անծուր և անծեր ես դու,
Անթարշամ ես ւ անապական,
Թըմբեալ արբեցայ յոգի,
Զի բուրես հոտ անմահութեան:

Հոտ քո է անճառ ծաղկանց,
Ճառագայթ ես արեգական,
Առ իս տեսանեմ ըզքեզ,
Նա ծաղկիմ որպէս ըզշուշան:

Ի սէր քո վառիմ անշէջ,
Նըւաղիմ առ քոյդ տեսութեան,
Պասքեալ ծարաւիմ ճոգով
Սոսկալի և յոյժ հրաշազան:

Արարած ես արարչին,
Հըրաշնիւթքն են քեզ պահապան.
Օրհնեալ արարիչըն քո,
Աքանչելի պատկեր տիրական:

Տեսին աննարմինքն ըզքեզ
Եւ ի գեղըդ քո հիացան,
Ի քառից ճիւթից կազմեալ
Եւ ունիս հոգի քաղցրական:

Արեգակն է քեզ ընծան
Կամ լուսինն ի հրճգէտասան,
Մուշթարի, զօհրայ և շամս,
Օտարիտ դէմ արեգական:

Կարմիր և կանաչ գունով,
Երփնազարդ որպէս ծիածան,
Դու ցօղ ես՝ իջեալ յամպէ,
Զարդարես զերկիր հրաշազան:

Դըրախտ ես ծաղկածաւալ,
Վայելուչ փըթթեալ բուրաստան,
Կարմիր վարդ կանաչ թըփով,
Համասփիւռ և մուրտ ու շուշան:

Ի յեզր Փիսոն գետոյն
Բուսանիս հիրիկ աննման,
Դևքըն սասանին ի քէն
Եւ լինին յոյժ հեալածական:

Նորաստեղծ եղեգնախունկ
Ի լեռնէն գաս սինէական,
Ազնիւ և անուշահոտ
Փարատես ըզցաւըս մարդկան:

Կինամոն ի Թէբայիդ
Գըտանի յոյժ հիացական,
Ծաղիկ զըմըռեալ չքնաղ
Եւ զարմանալոյ է արժան:

Նախամարգարէն Մովսէս,
Որ էառ յաստուծոյ հրաման,
Բերեալ եւղ աւուշ եփեաց
Եւ էօծ զառաջին խորան:

Եւղ թափեալ աւուն Ջիսուս,
Որ էօծ զբնութիւն մարդկան,
Նա քեզ հովանի լինի
Եւ պահէ ամբիծ ւ անսասան:

18

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Արեգակնափայլ գեղով լի լուսին ի տասնումընգէ,
Աչեր ծով ի ծով ուղիս, սոսկալի վարսաւոր սըրովբէ.
Ուներդ է քաշած կամար, գինչ գարնան աղեղն ի յամպէ,
Լեզուդ տապարզի շաքար, քո շրթունքըդ վարդի թերթ է:

Աստղըն վառ ի վառ պայծառ ելանես ի յառաւօտէ,
Սքանչելատեսիլ դիմօք, Միքայէլ հրեշտակն ես միթէ,
Չըկայ օրինակ այլ քեզ, հողածին քան զքեզ չբերէ.
Հազարաց բիւրոց ընտրեալ, ո՛ր լեզու ըզքեզ դըրուատէ:

Վարդ ես վայելուչ գունով, ցող առնուս ի վաղորդայնէ,
Արեւն երբ ի քեզ առնու, հիանայ ով զքեզ տեսանէ:
Հոտով քո արբեալ թըմրիմ, երբ քաղցրիկ հողմ ի քեզ հընչէ,
Փընջեալ երփնազարդ ծաղիկ, զքեզ բերած ի բարձըր ձեռնէ:

Հիրիկ, կինամոն, նարդոս, պալասան ի յԵգիպտոսէ,
Քըրքում և զըմուռ շուշան, դու ազնիւ քան զգոհար հալուէ,
Եղեգնախընկոց նմանիս, զըտանիս ի լեառըն Սինէ,
Համասփիւռ և մըրտենի, մանուշակ ի կանաչ թըփէ:

Ակըն դահանակ, սուտակ, եղեալ ես Փիսոն գետէ,
Տըպազ մեծագին, յասպիս, շափիւղայ, լոյսն ի քէն ցայտէ:
Ակատ, կարկեհան, յակինթ, մարգարիտ՝ եղեալ ի ծովէ.
Մաքուր, անարատ ոսկի, դու եկեալ ես ի յԵւիլատէ:

Ցապառած քարանց վիմաց մեծագին ակունք նորոգէ,
Առեալ ի ցողոյ յերկնից՝ ի յոստրէն մարգարիտ շինէ,
Մացառաց, ոստոց, փշոց հոտ անուշ ըզվարդ ընծիւղէ,
Կազմեալ ի ջըրոյ պատկեր է զարմանք թէ այսպէս առնէ:

Պատկեր ես քո ստեղծողին, շաղկապեալ ի քառանիւթէ,
Տիպն իր գոյացոյց ըզքեզ, նըկարեաց ւ եհան յարգանդէ,
Զիա՞րդ օրինակ տամ քեզ յանշնչից և յանըզգայէ,
Ցայս իմ այրեցած սրտէս զայս ընծայ ընկալ ւ ընդունէ:

Գրիգորիս Աղթամարցի արտասուօք ըզքեզ կաղաչէ,
Թէ՝ ինձ ողորմի ասցէք, և փրկիչն ձեզ պարգևէ:

19

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Աստուածանըկար պատկեր յօրինեալ ի յարարողէն,
Բանիւ քո բարդեալ դիզես զամենայն պարգևք հոգեղէն.
Գարուն գեղեցիկ եկեալ, հալածես ըզսառն ի ջըրէն,
Դըրախտ վայելուչ ծառօք, փըթըթին ոստունքն ի ճըղէն:

Երկիր զարդարեալ բուսօք, ընդունես ըզլոյսն յարևէն,
Զքեզ ամպ հրաշագեղ ասեմ, ծըծես ցօղ անձայն ի ծովէն:
Է՛, դու մըշտաբուխ աղբիւր, արբենան արարածք ի քէն.
Ընտրեալդ ի բազմաց բարի, սովեալոց տաս յանմահ հացէն:

Թևօք քո թեթև թըռիր, զօրանաս յամենազօրէն.
Ժամանէ ի գիտութիւն ժըրաջան մեղուդ ի բընէն.
Ի յերունքդ ի ներս շըրջիս, ժողովես զփոշին ի ծաղկէն.
Լուսափայլ ղամբար կազմես, քաղցրահամ կերակուրն ի քէն:

Խըտըղտայ Տիգրիս ւ Եփրատ զովացո զերկիր համօրէն.
Ծաղիկ ծիածան գունով, վայելուչ ու շաղն ի վերէն:
Կանաչ բարունակ տընկեալ քերկրութեան բաժակ ի յորթէն.
Համասփիւռ ծաղկի նմանիս կամ փըթթեալ վարդն ի կոկոնէն:

Զագըդ արծըւոյ ձայնէ, քարձրացիր և ել ի հաւէն,
Ղօղեալ հալածին թըռչունք, զերդ զինուոր ի թագաւորէն.
Ճանանչ ի յարփոյն առնուս և վառիս անաղօտ լուսէն.
Մաքուր մարգարիտ պայծառ, ծընեալ ես յերկնային ցօղէն:

Յուսկոյն ես արաբացոց՝ արձակես ճըշոյլ հրեղէն.
Նարդոս և քրքում զըմուռ և հալուէ ի հըռնդկականէն.
Ծարեալ պաղպաջուն ակունք, կայծ կարմիր ի Փիսոն գետէն,
Ոսկեակ, յակինթ և ական, կարկեհան բիւրեղ սառնօրէն:

Զքնաղ փայլելուչ տըպազ, զքեզ գովել չկարէ հողեղէն.
Պատուական մաքուր արծաթ և սրբեալ անօթ լուսեղէն:
Ջահըղ վառ ի վառ անշէջ, փարատես զխաւարն ի տանէն,
Խամիցըս գըլուխ զինուոր, զօրանաս ի զօրավարէն:

Սարդ և սօս, կիպար և նոճ, տապանակ ի յանփուտ փայտէն,
Վարսաւոր ծառըդ կենաց, զքեզ պահէ սոսկալի սրովբէն.
Տուն իմաստութեան շինեալ ի յանճեղ հըզօրի բազկէն,
Ռամեալ խըռնամես զազիրս և թափես ի չար գազանէն:

Յանկամ տեսանել ըզքեզ, իմ պըսակ փառաց լուսեղէն:
Իփսեցից երգըս տաղիս, զքեզ գովեմ հոմերոսօրէն:
Փափագիմ վարուցդ ամբիծ, տէր Անտոն ի Թեքաֆիդէն.
Քո արարողին տամ փառք, օրհնութիւն յաւիտեանս ամէն:

20

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Դու դրախտ Եդեմայ տընկեալ յանեղէն,
Ի յելս արևու տեղիք լուսեղէն,
Ծառօք ու ծաղկօք պըտղովք շողեղէն,
Զոր շրջափակեալ պահէ սերովբէն:

Որպէս զնախաստեղծըն գեղաղէշ ես,
Տիպ և գաղափար տեառն աստուծոյ ես,
Պատկերով պատուեալ քան զՄիքայէլ ես,
Ի հողեղինացըս հրդեղէն ես:

Թափանցիկ լուսով ակըն արևու,
Նիալիր լուսին մեղմով գընաս դու,
Աստղը վառ ի վառ, ցօղ առաւօտու
Եւ աւետաբեր հողմըն հարաւու:

Լեառըն Սարարադ, Կարմեղ և Սինա,
Թաբոր ՚ւ Հերմոն նման Բեթելայ,
Քօհի Սրանդէլ և փուռ քէմիայ[1],
Ով ի քեզ դիմէ շուտ փարթամանայ:

Վըտակ Եդեմայ և գետ Յորդանան,
Սելովմայ աղբիւր և ջուր ես յուզման,
Անկեալ եմ հիւանդ մերձ առ քոյդ դրան,
Սպասեմ հանապազ ես առողջութեան:

Փայլուն մարգարիտ ի մէջ սադաֆին,
Յաճագնաւեսիլ յատակըս ծովին,
Ջոր գաս ի ցամաք ձեռօք լողնորդին,
Եաղութ ու զըմրութ, գոհար մեծագին:

Վերնոց վեհագոյն և աշխարհի զարդ,
Ուշիմ և խոհեմ ՚ւ աճօրինակ մարդ.

---

[1] Լեռն ես Սրանդել, լի քիմիայով (իմա՝ հարստությամբ— պ.):

Նոճի, մրտենի, սամտալի և սարդ,
Նումանի ծաղիկ և փղթղթեալ վարդ:

Ցարեայ շըրջեցայ ի մէջ գիշերոյս,
Խընդրեցի գտալ զիմ աչացըս լոյս.
Եկ իմ գեղեցիկ քրքում և ճարդոս,
Ոչ թողից ըզքեզ մօտ ի տուն գինոյս:

Կեփազայ ոսկի և մաքուր արծաթ,
Վարսօք վայելուչ որպէս ըզթուխ սաթ,
Ով որ տեսանէ, դառնայ մաղասկաթ,
Անդուլ ՚ւ անդադար կու առնէ ֆըրեաթ:

Է՛ մանի թամամ, դըհանի թանկթար,
Է՛ քաման աբրու, սարմաստի ճիգար[2]:
Երբ ի կաս ածես զաչերըդ կամկար,
Սըրտեր ֆոցատես համարով հազար:

Սամպուլ ՚ւ ըռայհան, լալա ու կուլզար,
Պըլպուլ գուանդա ամատ բա բահար,
Նալա ու ֆիղան մէքուճաթ սահար.
Պաշաթ քի պինամ ըռուի տիլտար[3]:

---

[2] Ո՛վ լիալուսին, ճեղբերաճ,
Ո՛վ աղեղնաձոնք, սիրածին հարբեցնող (պ.):

[3] Սմբուլ ու ռեհան, կակաչ ու ծաղկունք,
Երգիչ սոխակը եկավ գարնան հետ,
Ողբ ու կոծ է անում (մինչև) առավոտ,
Թերևս տեսանեմ դեմքը սիրածիս (պ.):

Նարինջի ծաղիկ, կալիսի տերև,
Դու վարսաւորեալ յարմաւենոյ ձև,
Փայլես փայլի տաս սիրամարգու թև,
Խնդութեան տեղիք, աչացըս լոյս քև:

Հոտըդ քո բուրէ վարդ ու շուշանի,
Մուշկ և մանուշակ, հովիտ ծաղկալի,
Նարգիզ, նոնոֆար, բըլուր կըճդըրկի,
Ամենայն մըտաց ես ախորժելի:

Դու աքաղչելագործ քան զօրաւոր խաչ,
Անուոր տեսլեամբ քան ըզկարի քաջ,
Ելանես, գընաս, և լինիմ յառաջ,
Կամ վաստիր ընդ իս, կամ ետիր ի յաջ:

Գիշեր ու ցորեկ եմ ես երերում,
Ոչ կենամ ի դուռս 'ւ ոչ օթիմ ի տուն,
Սաւրա մէգարդամ համչու Մաջընուն,
Իմոզամ Ֆըրհատ, դիլի մահ փուռ խուն[4]:

Զարկած ի վերէդ քեզ կանաչ վըրան,
Բազմիս աւուր, 'ւ ես քեզ յանդիման,
Շօխշանգ շաքարի, ըռու արդաւան,
Է՛ լ(ա)ւ աղիղի ու դուռի դաւդան[5]:

---

[4] Թափառում եմ անապատում հանց Մեջնուն,
Այսօր Ֆարհատն եմ, սիրոս լի արյուն (պ.):

[5] Շողշողուն շաքար ես, կարմրագեմ (ես),
Ո՞վ սարդիոն շրթունք ու մարգարտե ատամ (պ.):

Սիրտըս փափագի և կայ ի դողմանճ,
Աչերս է կարօտ տեսոյդ աննըմանճ,
Սէ ըռուզ բուդիմ փէշի թու մեհմանճ,
Մառանջ, մէրաւամ, սարվարի խուբանճ[6]:

Զիարդ բաժանիմ ի քէճ կեանդանի,
Առանց քո տեսուդ շունչըս կու քաղի,
Չուճ թարկ բըդաճամ, գույի խօշբուի,
Գար քինամ՝ հազար ջաւր ու ապթամի[7]:

Աւրինութիւճ փըրկչին ի քեզ իջանի,
Կամօքճ աստուածային կենաս կեանդանի,
Գունդըք չար այսոցճ ի քէճ հալածի,
Ձերդ ըզարեգակն փայլես ի յերկրի:

Է՞ր ունայնաբանես, Աղթամարցի,
Այս կեանքս անցաւոր է՝ քեզ յուշ լիցի,
Այժմ յօժարութեամբ ես մեղաց գերի,
Բայց յետոյ լինիս ողորմ ու լալի:

---

[6] Երեք օր քեզ մոտ ճյուր էի,
Մի տխրիր, գնում եմ, գեղեցկուհիների գլխավոր (պ.):

[7] Երբ թողնեմ (քեզ), վարդ ես բուրավետ,
Թե տեսանեմ՝ հազար բռնություն ու դաժանություն ես (պ.):

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Դու ես արեգակ, լուսին ի լրման,
Չկայ քեզ օրինակ ի յորդիս մարդկան,
Պաշաթ քի շաւի Իւսուֆի Քանհան,
Է՞ ճօռաւիդայ կուլի քա պօստան[1]:

Պայծառ արուսեակ ի յառաւօտու,
Ես եմ քեզ փափագ, ւ չիսէ ես հեռու,
Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդըն դու,
Չըրա՞ դէր ամատի, բէմարամ բէ թու[2]:

Սախտեալ գեղեցիկ, ոսկի մէտրասայ,
Մէհրապ է քաշած զուներդ ի ճըմա,
Աչերդ է կանթեղ ի ներքոյ ճորա,
Կարդամ աճդադար աճդ քալամուլլահ:

Դու քեթըլմամուր և մաքաթուլլահ[3],
Գամ չայդ հեռաւոր ճանպահդ որ քեզ կայ,
Պըստանամ թազպէհ, բխուշամ խրղայ[4],
Լինի թէ աչերս քեզ արժանանայ:

---

1 Թերևս լինես Հովսեփ Քանանացին,
Ո՞վ դու պարտեզի ճորտանաս ծաղիկ (պ.):
2 Ինչո՞ւ ուշ եկար, ճիվանդ եմ առանց քեզ (պ.):
3 Դու բեյթուլմամուր և Մեքքե աստծու (պ.):
4 Թագքեհի ձեռք բերեմ, ճագնեմ քուրձ (պ.):

Իմ սիւն ի սրտի ւ իմ ուրախութիւն,
Իմ շունչ ու հոգի ւ իմ կենդանութիւն,
Աչացս առաջի ես քուն ւ ի յարթուն,
Տուշմանի թուրայ շաւադ ճիկարխուն[5]:

Նորաքոյս ծաղիկ և տունկ նշենի,
Երեսդ է պայծառ քան ըզթերթ վարդի,
Է՞ ամպարֆըշան հուրի ու փարի[6],
Զհինդ ու զԽորասան քո մէկ տեսդ արժի:

Ծրթունքդ է շաքար, խօսանքըդ ղանտ է,
Լեզուդ ի բերանդ անգին ճոհար է,
Համասփիռ ծաղկի հոտ ի քեն բուրէ,
Չէ քեզ օրինակ, քոյդ այլ փարթամ է:

Ունէրդ է քաման, թարթափդ է քո թիր,
Ջանգ աստ, ու չաշքար մէքունի թատպիր[7],
Թըրով ու սրով շատ որք խոցեցիր,
Զե՞հ հուքմ ու հրաման, զեհէ՞ սախթադիլ[8]:

Առիւծ ի շամբի բազկօք զօրաւոր,
Ամէն կենդանեաց ես դու թագաւոր,
Երբ աղաղակես ձայնիւդ ահաւոր,
Սարսափեն, դողան երէքըդ բոլոր:

---

5 Թող քո թշնամու սիրտը արյունոտվի (պ.):
6 Ո՞վ համպարաքուխ հուրի ու փերի (պ.):
7 Պատերազմ է, ու բանակ ես պատրաստում (պ.):
8 Ի՞նչ ուժ ու հրաման, ի՞նչ դաժանություն (պ.):

Կարմիր-ապիտակ խնձոր անտառին,
Ծըրար ըստաշխից և իւղ մեծագին,
Վազելով գնաս ի վերայ լերին՝
Նըման այծեմանց և որթուց եղին:

Բերկրութեան բաժակ և ապի հայաթ,
Ես եմ ծարաւեալ, արբո՛ ինձ մին կաթ,
Պըթէ փիալէ ու շիրին շարպաթ,
Մուրդա զընդա քուն, դարի քարամաթ[9]:

Քան ըզքաջ արծիւ քարձրագնաց ես,
Գեղեցիկ բազայ, լատիֆ ու թառ ես,
Փալլուն սիրամարգ ոսկէփետուր ես,
Քաղցրաձայն կաքաւ մըրղի սահար ես:

Սուրաթդ է սադաֆ մարգարտաքրտունք,
Է՛ փուստայ տըհան[10] ու բարակ շրթունք,
Սուտակ, դահանակ ու շարեալ ակունք,
Բիւրեղ քանդակեալ մատունք ւ ատամունք:

Քան զգարնանային ամպ քաղցրահոսան
Վայելուչ գուցով զերդ ըզծիածան,
Հողմով տարբերի քո հերըդ դեղձան,
Երբ որ ելանես սահրայ ի սէյրան:

Կիպարի, նոճի, կանաչ ձիթենի,
Նարինջ ու թուրինջ, տունկ պալասանի,

---

[9] Ծուր (ինձ) փիալե ու քաղցր օշարակ,
Կյանք տուր մեռյալին, ով հրաշագործ (պ.):

[10] Ո՞վ պիստակաբերան... (պ.):

Տօսախ, սիճուբար, շմշատ ու տուբի,
Միշտ կանաչ կենաս քան զՇղարեճի:

Զօրըն կու մաշիմ ի ճոգս ե ի դուսայ,
Վախեմ թէ լինիմ ի քեզնէ ճուտա,
Կամ գիս մոռանաս ու տաս ինձ ճազայ
Պութիմ խիրաթմանդ, քարդի դիւանայ[11]:

Նոր գարուն եղև և ճոր առաւօտ,
Նօ պուլպուլ ամատ, դումրի ու ճօտճօտ[12],
Նոր ձայն արձակեց, ճոր ճստաւ ի մօտ,
Նօ կուլ ու ամպուլ ես էի կարոտ:

Հեռացաւ գընաց յինէն սրտմութիւն,
Եկն եհաս այսօր ինձ ուրախութիւն,
Այլ փափագ չունիմ, իմ փափագըն դուն,
Քաղի յոյս աչացըն քո թշնամուն:

Քեզ միշտ հովանի բանըն հայրական,
Միքայէլ հրեշտակըն քեզ պահապան,
Ցաշխարհըս կենաս անփորձ ե անսասան,
Անմեղ, անարատ և անապական:

Ա՛յ Աղթամարցի՝ դու ծառայ մեղաց,
Աւուրքըդ գընաց սիսա ի ձեռաց,
Զգաստացիր հիմիկ և կաց ի չոտաց,
Լալով աղաչէ զՔրիստոս աստուած:

---

[11] Խմաստուն էիք, դարձրիր խելագար (պ.):

[12] Նոր սոխակ եկավ, տատրակ ու հոպոպ (պ.):

22

ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Մաքուր պատկերով նըման հրեշտակի,
Անգին մարգարիտ յեռեալ ընդ ոսկի.
Սէթ 'ւ Աբիսողոմ, Յովսէփ սըխրալի,
Անձամբ վայելուչ ի մէջ ամենի:

Է՜ ղօնձայ տըհան, ծաղիկ նըռնենի,
Պըտղով քարտանակ և դալար ուռի:
Դու քաղցըրհամայեաց փըթթեալ վարդենի,
Արմաւ և շուշան և նըշդարենի:

Ունէրդ է քաշած քան ըզթափած թուր,
Թարթափդ է քո թէք քան ըզնշտար սուր,
Սպանանես, գերես յօրըն հազար բիր,
Զե՛ն հուսնու սուրաթ ու զենէ՜ սամպուլ[1]:

Դու նազուք տայուս և մըրղի թութակ,
Կարկաչող կաքաւ, գարնան ծիծեռնակ.
Պուլպուլ ու դումրի՝ լատիֆ ու զիրաք,
Հօտհօտի սաքայ և փէքար մալաք[2]:

Ոսկի ի Հընդկաց, ակըն պատուական,
Ծուրջ գամ ու փընտրեմ ըզքեզ անխափան.

---

1 Ի՞նչ բարի երես ու ի՞նչ ամբող (պ.):

2 Սոխակ ու տատրակ՝ քնքուշ ու ճարպիկ,
Այգաբացի հոպոպ և պատկեր հրեշտակի (պ.):

Ես եմ քեզ խրճդրող և վաճառական,
Ի քազում մըտաց ծածուկ ՚ւ անկումաճ:

Նայեաց մէկ ընդ իս աչօքըդ մէստաճ,
Կամ քաղցրիկ խօսիր կամ տուր պատասխաճ.
Ճիկարում քէպապ, կօզում եաշի ղաճ,
Կէճայ ու կուճտուզ ղըլարըմ ֆըղաճ[3]:

Սըբի ու սաճարսաճ, ուզում ճուր ու ճար.
Թօքար աղգըճտաճ ճօպաթ ու շաքար[4],
Ցով որ դու ճայիս և առճես ճատար
Լինի քաճ ըզմոմ՝ պողպատ է թէ քար:

Սիրով լափեցիր ՚ւ արիր զսիրտըս խոց,
Կու տապիմ ՚ւ այրիմ որպէս ի հընոց.
Սըրտէս կու թափի յոլով ճուր ու բոց,
Ջայդ աստուածագիծ պատկերդ քո ինձ ցոյց:

Քո մէջքդ է բարակ քաճ զուռի վարոց,
Սպիտակ ատամունք՝ մարգարտէ շարոց,
Դու քաղցրատեսիլ և պըտուղ ծառոց,
Ցայդ շիրին լեզուէդ տուր երկու գըրոյց:

Քաճ զշամբ եղեգաճ ելեր ես շիտակ,
Ուճերդ է կամար որպէս զաղեղնակ.

---

[3] Սիրտն իմ այրված, արցունքս է ճոսում,
Գիշեր ու ցերեկ ողբում եմ ես (թ.):

[4] Առավոտ ու այգաբաց ես, դեմքդ ճուրճրաճ.
Թափվում է բերանիցդ ճաբաթ ու շաբար (թ.):

Աչերդ է պայծառ որպէս ըզծովակ,
Ղարդ եղայ ի ձերս ՝ւ եղէ անճարակ:

Թարթափդ է խանչար, ինքըն՝ պողպատ զուտ,
Այտով զիս հարիր ՝ւ արիր խուրտ ու մուրտ.
Ամպի պէս ածիր ինձ սաստիկ կարկուտ,
Թէ ես մեռանիմ, քեզ շահ չէ, օգուտ:

Շրթունքըդ է քո յար, կըլափդ է ամպար,
Տաշխ և կինամոն ճաֆայի թաթար.
Ըմուռ և հալվէ ու լալ ու ճօճար,
Ջօհրայ, մուշթարի ՝ւ արուսեակ պայծառ:

Վեր ես գընացեր քան ըզսիներբար,
Նըռնենի դըրախտ և սալվի չինար,
Լեզուդ է շիրին քան զՄըսրի շաքար,
Ի քո թըշնամոյն շինչըն տապար:

Քան զգարնանային մանուշակ հոտով,
Որպէս քաֆուր վարդ պայծառ և գունով.
Ծագիս քան զարև յերկնից կամարով,
Ձերդ ըզբոլորեալ լուսին ես լուսով:

Երբ որ կու շարժիս ոտօքդ ըռաւան,
Ուր որ դադարիս, այն տեղն է պօտուան.
Հանց սիաւաթով իջնուս քան ըզխան,
Դըրիր ըզգերիս զընճիլ ՝ւ ի զընտան:

Խև Աղթամարցի՝ դու բարեաց անչան,
Ունայն թըզենի, փշաբեր անդաստան.

Թո՛ղ զմէր աշխարհիս այս անցուորական,
Զի դառն ու լեղի է յոյժ անպիտան:

Անօրէնութիւնքըդ քո բարձրացան,
Որպէս քերըն ծանր սաստիկ ծանրացան.
Երբ որ մըտանես ի հող 'ւ ի տապան,
Ապա տաղես, դառնաս փոշիման:

23

ԱՂԹԱՄԱՐՑԻ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ

Ահա այգիք մեր ծաղկեցան,
Բուրեն ըզհոտն անմահութեան,
Ե'կ, ցանկալի իմ 'ւ աններման
Եւ զուարճասցուք ի բուրաստան:

Բոլսեն ըստինքդ կաթն և գինի,
Մեղր ի շրթանցըդ քո կաթի,
Որով հոգիս իմ փափագի
Եւ նըւաղեալ յոյժ տոչորի:

Գեղեցկագեղ, քաղցրաքարբառ,
Սէր քո ունի խորհուրդ անճառ,
Իմանալի արև պայծառ,
Լուսաւորեա՛ զմիտս խաւար:

Դրախտ վայելուչ, ծառ պըտղաւոր,
Քաղցրաճաշակ գինի և ցոր,
Սիրով արբեալ քո աճաւոր
Ի սեճեկին խորհըրդաւոր:

Երևեցաւ ծաղկունքն յերկրի,
Նըստցուք ընդ քեզ ի պարտիզի,
Երգեցից սէր քեզ սիրելի,
Սիրտ իմ սիրով քո ոչ յագի:

Զօր հանապազ ընդ քեզ կալով,
Ըզգեղ դիմաց քո դիտելով
Եւ խօսակից քեզ լինելով,
Ըստէպ-ըստէպ համբոյր տալով:

Էթէ յաչաց մարմնոյս ծածկիս,
Մըտաց աչօք ինձ երևիս.
Բնակեալ ես դու յիմում սրտիս,
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս:

Ընտրեալ ոսկի սոփերական,
Ակ լուսատու և կարկէհան,
Տըպազ և կայծ յոյժ պատուական,
Ելեալ խընդրեմ զքեզ անհատիան:

Թէ տեսանեմ ըզքեզ կըրկին,
Լուսաւորի միտքս իմ մըթին,
Եւ տամ համբոյր շրթանց քոյին,
Նա վերանամ ես ի յԱդին:

Ժուժկալութիւն չունիմ ասկամ,
Ջոխի ու զգիշեր ընտեալ ողբամ,
Վառեալ սիրով քո տապանամ,
Ջաչս ի յանհասըդ համբառնամ:

Ի տեսլենէ քո արբեցայ,
Անեղակերպ լուսոյ արքայ.
Հոգիս բերկրեալ ընդ քեզ ցնծայ,
Սիրով ի սէրըդ կապեցայ:

Լուսապայծառ երևի ձև,
Որթուց եղանց ընման խայտայ,
Անհա եկեալ ի Թէմանայ,
Զգեստաւորեալ ի Բոսորայ:

Խունկ և հալուէ, ծաղիկ դաշտոյց,
Անճառելի հոտ քո բուրեաց,
Ելից զաշխարհս համատարած,
Յորմէ մարդիկ եղեն հարբած:

Ծաղիկ փղթթեալ առաւօտու,
Հոգոյս, մարմնոյս իշխանըն դու.
Լուսաբորբոք ակն արևու,
Օդ քաղցրութեան ի հարաւու:

Կարմրըրացեալ ի գոյն վարդի
Ի մէջ ծաղկանց երևելի,
Բարձրաւուղէշ արմաւենի՛,
Գլխոյս իմոյ լե՛ր հովանի:

Հուռ քո աննուշ տարածեցան,
Որպէս ըզվարդ և ըզշուշան,
Նարդոս, քրքում և պալասան.
Քիմք մեր ի քէն պարարեցան:

Զայն տուր և ինձ, ո՛վ տարփալի,
Նուաղեալ հոգիս յոյժ ծարաւի,
Մարմինս մաշեալ այլագունի
Վասն տեսլեան քո սրխրալի:

Դամբարափայլ ճաճանչ լուսո՛յ.
Ծիս վառեցեր ըզկայծ սիրոյ.
Սիրտ իմ արթուն կայ վասն քո,
Ոչ դադարի ակս ի լալոյ:

Ճեմեալ ընդ քեզ ի յանդաստան,
Փափագով քո սուրբ տեսլեան՝
Անեղակերպ և հրաշագան,
Աչք մեր ի քէն ընտրեցան:

Մաքուր մարմնով մարգարտափայլ
Անեղատես լուսոյ ընկար,
Ի հազարաց բիւրոց ընտրեալ,
Մըտեր ի սիրտս իմ թագնաբար:

Յորժամ ի քէն լինիմ հեռի,
Սիրտս իմ սիրով քո հրդեհի.
Ջեռդ գեղջերուն, որ փափագի,
Յաղբերըս ջուրց միշտ յօժարի:

Նըստեալ ի յանց ճանապարհին
Վըտակ ի յաչացս իջանի.
Արտասուօք զանկողինս թացի.
Դարձիր առ իս, ո՛վ սիրելի:

Ցրթունք քո սուրբ թէ շարժեացես,
Նուրբ և ծածուկ սիրով ազդես,
Զանկեալս կրկին յարուցանես,
Ամբիծ, մաքուր, անարատ, հեզ:

Ո՛ւր խնդրեցից զքեզ ցանկալի.
Մի և ընտրեալ քոյն ծնօղի.
Ծընօտքն քո ընման տաշխի,
Զքիմս իմ ելից յանկարծակի:

Չունիմ հանգիստ գերդ հրակիզած,
Կամ վարանեալ և դեգերած,
Որպէս մոլի եմ և արբած,
Քեզ փափագիմ, պըսա՛կ փառաց:

Պարտէզ փակեալ շուրջանակի,
Աղբեւր կընքեալ ջրոյն կենդանի.
Նըստեալ ի բլուրըն կընդըրկի
Լիբանանէ եկ, սիրելի՛:

Զահիդ վառեալ ի Սանիրայ,
Զայն քո եկեալ յԱհերմոնայ,
Լերանց ընծուց դիմեալ և գայ,
Մեղր ի ներքոյ լեզուի քո կայ:

Ընկուզք լցան մեր ի հոտոյ,
Քոր և հեղեր ընման իւղոյ.
Նարդոս, քրքում, ծաղիկ ծառոյ,
Եղէգն և խունկ, լեառըն գմբոյշ:

Սէր քո զսիրտս իմ տոչորէ,
Անշէջ վառեալ բոցակիզէ,
Ջքունն ի յաչաց իմ թօթափէ
Մէջ գիշերի՝ առաւօտէ:

Վայելչագեղ, ծաղկածաւալ,
Ջերդ սերովբէ վարսաւորեալ,
Քան ըզլուսին ես լըրացեալ,
Խաւարելոյս արև պայծառ:

Տուր ինձ ըզձայն քո ազդելով,
Ջի խաւդակաթ եմ ես սիրով.
Գլուխ քո լցեալ մանրիկ ցօղով,
Աչք քո ծաւալ տան զերդ ըզծով:

Բուռեալ սիրով քո ըղձալի
Ձձայն քո արա ինձ լսելի.
Դարձի՛ր, դարձի՛ր, դա՛րձ սոմնացի,
Դարձեալ բ՛նակեա՛ յիմում սրբոյ:

Ցանկամ գեղոյ քո գերունակ,
Հեզ և հանդարտ, ամբիծ տատրակ.
Ուրախութեան իմոյ գուշակ,
Ջոր երկրաւորքս չեն օրինակ:

Խիստ եւ զիս ի քեզ սիրով,
Կամ ու սպասեմ այսու յուսով
Եւ հառաչեմ արտասուելով,
Թէ ճորոգես կրկին մարդով։

Փեսայ և տէր իմոյ հոգոյս,
Յոյժ հեռացար վասն իմ գործոյս.
Նոր միացիր ընդ մեռելոյս
Եւ այց արա կորուսելոյս։

Քեզ գովութիւն յանարժանէս,
Ընկալ զսակաւս ի նըւազէս,
Ի յաղքատի գանձարանէս.
Տուր զշնորհաց ձիրըն պէս-պէս։

24

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ

Գարունն երեկ պըլպուլն յայգին,
Ծաղկունքն ամէն շատըլխ արին
Եւ մուշթուլուխ տարան վարդին,
Թ'ելեր կու գայ քո սիրելին։

Ռախացեալ պլպուլ հային
Ընդ կանաչել վարդին թըփին,
Գընաց պլպուլն եբեր զղումրին,
Թէ՝ Եկ ու տես ըզելք վարդին։

Ի մէջ պաղչին վըրաս զարկին,
Ի ինքս էր ի քուս մէջ կոկոնին.
Կանչեց պլպուլն ըզղազալին
Ի ուրախացաւ ի տես վարդին:

Գիշեր ցորեկ կամ երերուս
Եւ ես կայրիմ ի դէմ վարդուս.
Թէ երբ ելնէ ինքն ի քընուս,
Քանի՞ անեմ զար չիր սիրուս.

Ով սիրելիք իմ հաւասար,
Թէ գիտէք դեղ՝ արէք ինձ ճար,
Գընամ ի վարդն ի զէնէհար
Եւ ծառայեմ սրտովս յօժար:

Բանք թոչնոց, զձեզ մոռացայ,
Յորժամ զքաֆուր վարդըն տեսայ.
Ընդ աւետ գունըն հիացայ,
Ի բուրմանէ հոտոյն արբայ:

Ի քէն հայցեմ, վա՛րդ պատուական,
Մի՛ համարիր գիս անարժան,
Կա՛մ սպասաւոր ի քոյդ դըրան,
Մի՛ արձակեր զգերիս ունայն:

Սէր քո աւետ ւ անուանելի,
Տըկար թոչունս գիա՞րդ լինի,
Սիրտըս վառեալ հըրով այրի,
Թէ ինձ չառնես պատասխանի:

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՅԵԱԼ

Յետ գընալոյ վարդին եկ պլպուլն յայգին,
Ետես թափուր զվրանն, քաղեցաւ հոգին,
Խնդրէր և հարցանէր ըզիւր սիրելին,
Կանչէր զար ու ֆիղան ի մէջ գիշերին:

Այգի՛, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,
Ընդէ՞ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,
Որ է ամէն ծաղկանց ապվար ու սուլթան,
Գունովըն գեղեցիկ հոտ անմահութեան:

Քանի քո ամուր պատդ, դառնաս աւերակ,
Չորնա ճուղդ ու տերևդ ծառոցդդ շիտակ,
Ամէն ոտքն խաղա ի քեզ համարձակ,
Վերնա քուս ու բանճար ամէն կանաչ տակ:

Ակո՛ւնք յորդախաղացք, մի՛ գնայք առաջ,
Ծառե՛ր, թօթափեցէ՛ք զտերև ձեր կանաչ,
Խօսիմ պարզ և յիստակ, ասեմ անամաչ,
Քանզի տարան յինէն զսիրելին իմ քաջ:

Ջիմ վարդն ի քէն տարան ւ արին գիս շիւար,
Առին ըզլոյս աչացըս, տիրեաց ինձ խաւար,
Ըզտիւ և ըզգիշեր ողբամ անդադար,
Դարձեր եմ մաղասկաթ և չունիմ ղըրար:

Լինի թէ այգեգործն արար զայս ընդ իս,
Տարեալ ըզվարդըն յինէն ցաւեցոյց զհոգիս.
Այլ զնա ոչ տեսանեմ զինչ լինամ գերիս,
Փոխանն ուրախութեան, ողբ անեմ վարդիս:

Վախեմ հողմըն սաստիկ ելաւ ահագին,
Վասն այն թօթափեցաւ տերևըն վարդին,
Եւ կամ խորշակահար տապըն արևին
Եհար թարշամեցոյց ըզգեղըն քոյին:

Կարծեմ եթէ ծաղկունքըն արին հետ ինձ քէն,
Տարեալ հեռացուցին ըզվարդըն յինէն,
Եւ կամ կարկուտ եկաւ սաստիկ ամպեղէն,
Եհար զնա անողորմ, կտրեաց ի թըփէն:

Ծաղկունքըն ամէն ասեն նորա միաբան,
Եթէ քըզնա չունիմք ի վարդէն կուման,
Մեզնէ քեզ թասալլու է հազար տաստան
Ազ մա նազան ռակթ սըռի ու փինհան[1]:

Պլպուլըն վերացաւ ի յօթըն թևով,
Ասաց թէ հարցանեմ թռչնոցըն սիրով,
Եթէ գիտեն նոքա, ասեն ինձ փութով,
Թէ չէ հանեմ յաչացս արտասունք քան զծով:

Թռչո՛ւնք, այսօր գիտէ՞ք, թէ զինչ գործեցաւ,
Զի վարդըն վայելուչ յայգոյն վերացաւ,

1 Մեզնից հանկարծ գնաց գաղտնի ու ծածուկ (պ.):

Միթէ տեսել էք դուք, լսել էք համբաւ
Կամ գողըն գողացաւ կամ զի՞նչ տիրեցաւ:

Ասեն թէ՝ արարիչ տէրըն գիտակ է,
Ամէն ծածուկ սրտի նա տեսանող է,
Քո վարդըն չեն՛ք տեսեր, աստուած վկայ է,
Գընա, շրջիր յայլ տեղ և զնա որոնէ:

Պլպուլն դառնացաւ, ասաց՝ Ջինչ լինիմ,
Գիշերն մինչև ի լոյս մըտօք ես տանջիմ,
Վախեմ առանց վարդին յանկարծ մեռանիմ,
Կարօտով բաժանեալ ի հողն իջանիմ:

Թէ զարարածս ամէն վարդին փոխան տան,
Նա ինձ անարգ թըւի՝ ոչինչ, անպիտան
Կամ դասս երգեցողաց երաժըշտական
Քաղցրիկ եղանակեն, ինձ գուժ է և գան:

Ո՞ւր տարան, վա՛րդ, ըզքեզ կամ ո՞ւր թաքուցին,
Ջիարդ մոռանամ ես ըզսէրըն քոյին,
Խոցեցաւ սիրտս ու լերդըս կըսկծագին,
Ծաղկունքըն հաւասար այսօր թառամին:

Իմ կեանքս է գէմ երազ, ես՝ յերերմնի
Եւ լոյսն արեգական ինձ խաւար թըւի,
Դիժար և դառնութեամբ աւուրքս անցանի,
Որ և ի թիւ կենացս իմ ոչ անկանի:

Վարդէն բաժանեցայ ողորմ ու լալի
Եւ բան մարգարէին առ իս կատարի,

Քանզի հաւալաատն եմ յանապատի,
Եղէ ես որպէս բու ի յաւերակի:

Եկեալ այգեգործին մխիթարեաց զնա,
Ասաց՝ Մի լար, պլպուլ, քո վարդըն կուգայ,
Եկեալ է մանուշակ վարդին փիատալ,
Թուրայ խասպար ամատ՝ ասլամ ու տօվայ[2].

Իսկոյն ուրախացեալ և օրհնեաց ըզնա՝
Խաղաղութեամբ կենաս յաշխարհիս վերայ,
Այգի քո փըթըթի, ծաղկունք ի նըմա,
Պարիսպըն նորոգի ՚ւ ի մէջն բըբայ:

Ամէն արմատ և ճուղքըն դալարանան,
Առնուն շաղ ի յամպէն և պայծառանան,
Շարժին քաղցրիկ հողմով փայլելուչ շուշան
Եւ հոտըս տարածեն ի քիմըս մարդկան:

Առեալ տարան զնամակն ի դուռըն վարդին,
Հազրէվարդին դիմաց կարդացող բերին.
Կանգնաւ ի վերայ ոտաց և թուղթն ի յափին,
Ընթերցաւ բարձրաձայն ի լուր ամենին:

«Քեզ ողջոյն գրեմ ես, սրտով սիրելի
Եւ հարցանեմ յանձնէդ, ով երանելի,
Յուսամ ես առ աստուածն ամենայնի,
Որ անարատ մարմնով ես դու կենդանի:

[2] Քեզ լուր եկավ, ողջույն ու մաղթանք (պ.):

Զօրըն բազկատարած կամ ի յաղօթի՝
Խնդրեմ ի յաւտուծոյ քո կեանքն յերկարի
Եւ աչն անեղական լինի հովանի,
Ներքին և արտաքին չարն ի քէն փախչի:

Ծաղկանցն ամենայնի գլուխըն դու ես,
Որպէս զարքայ և տէր ամենի տիրես,
Գունովըդ վայելուչ, հոտովդ անուշ ես,
Յամէն առաւօտու քան զարև փայլես:

Երանի այն պահուն, որ տեսանեմ զքեզ,
Չի դու ես բընութեամբ անարատ և ճեզ,
Խոնարհաբար հեռուստ երկրպագեմ քեզ
Եւ ըզդարձ քո խընդրեմ, քաղցրացի'ր առ մեզ:

Թէ զիմ ըզգաստութիւնըս հարցանես դու,
Չունիմ խելք ու բաւար 'ւ ոչ իմաստութիւն,
Չառնում դուր և դադար և ոչ շինեմ բուն,
Նադարամ թաղաթ, նա եք մըսխալ խուն[3]:

Չի առանց քո տեսուդ եմ ես երեքուն,
Գիշերըն քուն չի գար, այլ կենամ յարթուն,
Նեղեալ և փըղձկիմ, երբ չինի գարուն,
Հալեր եմ ու մաշեր ի քո կարօտուն»:

Վարդըն պատասխանի նորա թըղթուն տայ,
Ասաց՝ Բազում ծաղկունք առաքեմ առ նա,

[3] Չունեմ զորութուն, ոչ մեկ մսխալ պրուն (պ.):

Որ զարդարեն լերինք, դաշտք, զամէն աահրայ,
Ի հոն ուրախութեամբ պուլպուլըն կենայ:

Ինձ գնալու ատեն այլ անպատեհ է,
Պլպուլըն սակաւիկ միթէ համբերէ,
Թէ կատարեալ իւր սէրն ի հետ վարդին է,
Ասցէք թէ ի դրախտն ըզնա որոնէ:

Ուրախացաւ պլպուլն ընդ առել բանին.
Ասաց թէ՝ Աւետիք ինձ այսօր բերին,
Ջիմ գեղեցիկ ըզվարդս ալվի ինձ բերին,
Չէ պարարծս ամէն կարմիր վարդին գին:

Յորժամ արևն ի խոյն եկեալ ժամանեաց,
Ամպ ի վերուստ ի վայր չանկարծ որոտաց,
Բուսաւն ծաղկունք յերկրի և ազգըս ազգաց,
Վարդըն չէր ի միջին, պլպուլն որոնեաց:

Յետոյ տեսաւ զկանաչ տերևըն վարդին
Այլ պատուական պայծառ որպէս առաջին,
Վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին,
Ծաղկունքն հաւասար երկըրպագեցին:

Պլպուլըն զայն տեսաւ ասաց. Գոհութիւն,
Յամենայն բերանոյ օրհնաբանութիւն,
Թագաւորին երկնից փառաբանութիւն,
Տեսայ աչօք ըզվարդն ի մէջ թըփերին:

Յիմար Աղթամարցի, զխելքըդ ժողովէ,
Ջի սէրն այս աշխարհիս հաւասար փոշի է,
Փառք և ուրախութիւնս այս անցաւոր է,
Կենացըս կայ վճար, քանզի երազ է:

26

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ ԱՂԹԱՄԱՐՅՈՑ

Գարունն է բացվեր վարդն ի պաղչանին,
Քաղցր եղանակեն պլպուլն ու դումրին,
Սիրով են վառեալ ի կարմիր թըփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Է՛ շամս ու դամար աստղ առաւօտին,
Պայծառ արեգակըն լուսով ի լին,
Լալ ակն ու գոհար ես դու մեծագին,
Ծիրանի ծաղիկ, գոյն մանուշակին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Դու ճշդարենի ծաղիկ շուշանի,
Դու կանաչ բըրքայ ի մէջ շուկային,
Քաղաքն Խութան ու Զինումաչին,
Խորասան բոլոր չէ՛ քո տեսոյդ գին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Մոմեղէն մատունք, հոտ պալասանին,
Դու նուշ ու շաքար, տուփ անուշ խընկին,
Դու կարմիր խնձոր ի մէջ տերևին,
Ծաղկեալ բուրաստան և ցօղ արևին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Մարգարիտ պայծառ ես դու մեծագին,
Անգամբ զարդարեալ ի յոսկի սէնին,
Նուռնուֆար ծաղիկ, գոյն ըուահանին,
Մուրտ և բալասան, փափուկ շուշանին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Համասփիւռ ծաղիկ ես բուրաստանին,
Բուրմունք պայծառ ի յԱդին դրախտին,
Ջոհրալ մուշթարին, առտու առաւօտին,
Ջոհրայ լուսաբեր, ղամար ու լուսին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Շամս և արեգակն երկնային գընդին,
Թուխ ամպիդ նման ցօղես աննձրևին
Ծառ կանաչտերև՝ դու պտղով ի լին,
Բողբոջեալ ծաղկով ոստ արմաւենին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Կընդրուկ և զլմուռ, խունկ ընդ հալուէին,
Քաղցր և ախորժակ համով շաքարին,
Ի յամէն դիհաց քընէ ձեզ բարին
Եւ ձեզ հովանի ճշաւ սուրբ խաչին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Պահապան լինի աչըն հայրենին
Եւ փրկէ զձեզ ի չար վըտանգին:
Գինով եմ, գինով, ցորեկս արևով,
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

27

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱՑԷՆ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻ ՈՒՆԵՑՈՂԻ ԵՒ ԼԱԼՈՒ

Յամէն առաւօտ և լոյս
Գաբրիէլն ասէր հոգոյս.
«Արի՛, ե՛լ ի յայս այգոյս»,
Այս իմ ճորատունկ այգոյս:

Քար եմ բերեր ապերոյս,
Փուշ եմ կրեր ձորերոյս.
Պատ եմ բոլորեր այգոյս,
Կասեն՝ թ՝ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ինչպէ՞ս կլնեմ ի լայգոյս,
Գէմ չար փուշ կայ պատերոյս:
Ջուր եմ բերեր լեռներոյս,
Աղբիւր եմ շիներ այգոյս,
Դեռ չեմ խըմեր ի ջրոյս,
Կասեն, թ՚ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ուռ եմ տընկեր այս այգոյս,
Ջտակն եմ ջրեր այս տընկոյս,
Դեռ չեմ կերեր ի պըտղոյս,
Կասեն, թ՚ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:
Այս իմ [նորատունկ այգոյս]:

Հընձան եմ շիներ այգոյս,
Կարաս եմ թաղեր գինոյս,
Դեռ չեմ խմեր ի գինոյս,
Կասեն, թ՚ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:
Այս իմ նորաշէն տներ[ոյս]:

Տուն եմ շիներ մէջ այգոյս,
Ոսկով նաշխած չարտըխնուս,
Դեռ չեմ վայլեր շենքերոյս,
Կասեն, թ՚ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:
Այս իմ [նորաշէն տներոյս]:

Վարդ եմ տնկեր այս այգոյս,
Կարմիր ՚ւ ըսպիտակ վարդոյս,
Դեռ չեմ զհոտն առեր զվարդոյս,
Կասեն, թ՚ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ծաղիկ եմ տընկեր այգոյս,
Կանաչ ու դեղին ծաղկոյս,
Դեռ չեմ զհոտն առեր ծաղկոյս,
Կասեն, թ՝ «Արե՛կ, ե՛լ այգոյս»:
Այս [իմ ճորաշէն տներոյս]:

Գաբրիէլն եկաւ հոգոյս,
Յաճէն կապեցաւ լեզուս,
Խաւրաւ աչերս ի լալոյս,
Աւա՜ղ իմ կարճ արևուս,
Կասեն, թ՝ [«Արեկ, ել այգոյս»]:

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին գիս յիմ այգոյս,
Մահ է, որ ելնեմ այգոյս,
Այս իմ ճորաշէն տներոյս:

Ուրն կանաչ է այգոյս,
Որթն բացուեալ է տընկոյս,
Խաղողն գոյնըզգոյն այգոյս,
Ծառեր-տունկըն շատ՝ այգոյս,
Կաս[են, թ՝ «Արե՛կ, ե՛լ այգոյս»]:

Պուլպուլըն կանչէ այգոյս
Առաւօտէն մինչ ի լոյս,
Ցօղն ի՛ջանէ ի յայգոյս
Յամէն առաւօտ և լոյս:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հանգուցյալ գրականագետ Մայիս Ավդալբեգյանը ներկա ժողովածուն կազմել է Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությունների իր իսկ աշխատասիրությամբ լույս ընծայված քննական-համեմատական հրատարակության (Երևան, 1963) հիմնական բնագրերից: Իսկ այդ հրատարակության յուրաքանչյուր բնագիրը պատրաստելու համար, ինչպես արձանագրել է Մ. Ավդալբեգյանը, «իբրև սկզբունք հիմք է ընդունվել մեկ ձեռագիր. մյուսները համեմատվել են հիմնական բնագրի հետ. տարբերությունները նշված են տողատակին» (էջ 102): Հիմնական բնագիր այդ «մեկ ձեռագիրը» որպես կանոն եղել է ամենահին թվակիր գրչությունը: Սա նշանակում է, որ սույն գրքի մեջ զետեղված տաղերը ներկայացված են ձեռագրական մեկ տարբերակի ընձեռած տվյալներով, դրա գրչական որոշ աղճատումներով հանդերձ:

Հաշվի առնելով մասսայական ընթերցողի պահանջները և ի հարգանս Մ. Ավդալբեգյանի հիշատակի, գիրքը խմբագրելիս, այդ աղճատումները ելազագույնի հասցնելու մտադրությամբ՝ ձարկ համարվեց կատարել հետևյալ անհրաժեշտ փոփոխությունները.

ա) Վերականգնված է «Գանձ ուղղկարու սուրբ նշանին» ստեղծագործության տների կրկնակը, որ քննական հրատարակության մեջ նշված էր սոսկ «Երկրպա.» համառոտագրությամբ:

բ) Ելնելով կոնկրետ տաղերի հանգավորման, տաղաչափական և այլ առանձնահատկություններից, հիմք ունենալով քննական հրատարակության տարբերակային առավել ճշգրիտ ընթերցումները՝ ուղղվել են այն մի քանի շեղումները, որոնք հատատապես գրչական ընդմի-

ջարկություններ ու աղճատումներ են և շատ հեռու՝ հեղինակային ձևեր լինելու հավանականությունից։

գ) Ժողովածուն համալրվել է թուրքերեն ու պարսկերեն տողերի թարգմանություններով, որոնք բերվել են ըստ Հ. Աճառյանի և Բ. Չուգասզյանի վերծանումների։

դ) Սակավ դեպքերում վերաձայվել է կետադրությունը։

Վ. Ներսիսյան

ԲԱՌԱՐԱՆ*

Ալէմ— գիտուն, գիտնական, ուլամ
Ամքէր— տե՛ս ամպար
Ամպար— մածուցիկ բուրումնավետ օծանելիք
Աշըղ— սիրահար
Ապի հայաթ— կենդանության ջուր, անմահական ջուր

Բասար— խելք, բանականություն
Բըռքայ— տե՛ս բրքայ
Բրկա— տե՛ս բրքայ
Բրքայ— լճակ, ավազան

Գրախտ— ծառ, պարտեզ

Եադութ— տե՛ս յաղութ

Զար— ողբ ու կոծ
Զէնէհար— պաշտպանություն, ապաստվություն, փրկություն, ապաստան
Զըմպուլ— տե՛ս սիմպիլ
Զընճիլ— շղթա
Զնտան— բանտ, զնդան
Զօհալ— Երևակ մոլորակը
Զօհրայ— Արուսյակ մոլորակը

Ըռաճ— տե՛ս ռամ
Ըռանկ— տե՛ս ռանկ

---

* Բառարանը կազմել է Բ. Լ. Չուգասզյանը։

Թան — թագ
Թառ — դալար, փափուկ, ճարմ, թաց, խոնավ
Թասալլու — մխիթարանք
Թիր — նետ
Թուրինճ — տե՛ս թուրինջ
Թուրինջ — նարնջի մի տեսակ

Լալ — թանկարժեք կարմիր քար, սուտակ, կարկեհան
Լատիֆ — վայելուչ, քնքուշ, փափուկ

Խամար — տե՛ս ղամար
Խանչար — դաշույն
Խուրդ — մանր, փոքրիկ
Խուրդ ու մուրդ — ջարդ ու փշուր

Կահ ու պէկահ — ժամանակ ու անժամանակ, ժամ ու անժամ
Կամկար — կամակար, փափագին հասնող, երջանիկ, բախտավոր, անձնիշխան
Կուլ — վարդ, ծաղիկ
Կուման — կարծիք, կասկած

Հազար — տե՛ս հազերի
Հազար դաստան — սոխակ
Հազրէվարդ — ծաղկի անուն
Հազերի — պատրաստակամ, ներկայություն
Հազրի — տե՛ս հազերի
Հայիֆ — ափսոս, ավաղ
Հասրաթ — տրտմություն, կարոտ, փափագ, տենչանք

Ղազալ — սիրերգ, տաղ, գազել
Ղալաթ — սխալ, սխալանք
Ղալմուղ — կալմիկերեն
Ղամար — լուսին
Ղանդ — շաքար, այլաբանորեն՝ քաղցր

Պարդ լինել— ջրախույզ լինել, խեղդվել
Պըրար— ճանգիատ, դադար
Պումրի— տատրակ
Պուսայ— վիշտ, մտատանջություն
Պօճճայտըճաճ— կոկոնաբերան

Ճազալ— պատիժ
Ճուտալ— անջատ, զատ, ջոկ
Ճօճար— գոճար

Մարճաճ— բուստ՝ ծովային բույս, որ ջարի պես է
Մէհրապ— հեթանոսական տաճարի, հետագայում նաև մզկիթի ավագ սեղանը, կամարակապ որմնախորշը, որտեղ կանգնում և աղոթում են
Մըրդի սաճար— առավոտյան թռչուն՝ աքաղաղ, սոխակ, տատրակ
Մըրդ— տե՛ս մըրդի սաճար
Մէստաճ— հարբած, գինով
Մէտրասայ— դպրոց, ուսումնարան
Մուշթարի— հուսնթաց մոլորակը
Մուշթուլուխ— ուրախ լուր, ավետիս
Մուշկ— օծանելիք, որ ստացվում է այծյամի պորտից
Մուրտ— տե՛ս խուրտ ու մուրտ
Մուրտ— անթառամ ու հոտավետ մի ծառ

Յաղութ— հակինթ
Յատապ— տանջանք, չարչարանք, պատիժ
Յիսա— Հիսուս

Նատար— հայացք, ակնարկ
Նատար առնել— աչքով տալ
Նաֆալ— մուշկի պատիճը՝ մշկայծյամի հոտավետ պորտը
Նաֆալի թաթար— թաթարական նաֆա (տե՛ս)
Նէրկիզ— նարգիզ, նարկիս
Նումաճ— կակաչ, հարսնուկ
Նօ— նոր

Շահ պլպոկ— սոխակների թագավոր
Շամս— արև, արեգակ
Շատլըխ— ուրախություն
Շարապ— խմիչք, գինի
Շէմս— տե՛ս շամս
Շէքէր— շաքար
Շիրինց— քաղցր, անուշ
Շճշատ— տոսախի ծառ կամ թուփ

Որաղ-որաղ— թերթ առ թերթ

Չարտըխ— չարդախ, քառասուն շինվածք
Չինար— սոսի
Չինի— հախճապակի

Պաղչա— փոքր պարտեզ
Պէկաճ— տե՛ս կաճ ու պէկաճ
Պէճալ— անուժ, թույլ, անտրամադիր
Պէուշ— ուշաթափ
Պրքալ— տե՛ս բրքալ
Պօստան— պարտեզ, ծաղկանոց, բուրաստան

Ջօճար— տե՛ս ճօճար

Ռահ— ճանապարհ, ուղի
Ռահաճ— տե՛ս ոէհաճ
Ռանկ— գույն, երանգ
Ռաւան— սահուն, ընթացող
Ռաւանդ— գաբի, ուսանդ, խավրծիլ
Ռէհնաճ— շահասպրամ

Սադաֆ— գաղտակարա, մարգարտի խեցի
Սալվար— գլխավոր, հրամանատար, վեհապետ
Սալվի— ճոճի, կիպարիս
Սախտակալ— պատրաստված, կառուցված
Սահրա— դաշտ, անապատ

Սանտալի— ճանդան, սանդալ ծառը, որ հոտավետ փայտ ունի
Սապահ— առավոտ, արշալույս
Սապապ— պատճառ, առիթ
Սար— գլուխ, գագաթ
Սարդ (սադր)— ծառի անուն
Սէնի— մատուցարան, ափսե
Սէլվի— տե՛ս սալվի
Սէյրան— պտույտ, զբոսանք
Սիասաթ— դիվանագիտություն, քաջիմացություն
Սինուբար— բարդիի մի տեսակ, իտալական սոճի
Սիւմպիւլ— հակինթ, նարդոս, ցորենի հասկ
Սուչ— հանցանք, մեղք
Սուրաթ— դեմք, երես

Տայուս— սիրամարգ
Տապարզի— բյուրեղ շաքար՝ սպիտակ, շատ քաղցր
Տըհան— բերան. տե՛ս փուստատըհան և ղօնճայտըհան
Տուբի— իբր արքայության կամ դրախտի ծառերից մեկի անունը
Տուշ— քուն ու երազ

Փարտա— վարագույր, քող, ծածկոց, շղարշ
Փեղամպար— պատգամաբեր, մարգարե
Փիատայ— հետիոտն
Փուստա— պիստակ
Փուստատըհան— պիստակաբերան

Քալամուլլահ— աստծու խոսքը՝ ղուրան
Քաման— աղեղ
Քաֆուր— աստծուն ուրացող, անհավատ

Օտարիտ— Փայլածու մոլորակը

Ֆըղան— ողբ, կոծ, աղաղակ
Ֆըրեաթ— աղմուկ, ողբ, վայնասուն
Ֆիղան— տե՛ս ֆըղան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրիգորիս Աղթամարցի — Մայիս Ավդալբեգյան 5

Տաղեր

1. Տաղ Գրիգորիսի Աղթամարցոյ է — Եղուկ ու հազար մի վայ 16
2. Ի Գրիգորիս Աղթամարցոյ արարեալ ռամաւոր զվարս Մարիհնոսի ճգնաւորին — Անծին և անըսկիզբն է հայրն երկնային 18
3. Տաղ Աստուածատուր Խաչքայեցուն ի Գրիգորիս կաթողիկոսէն Աղթամարցոյ — Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան 28
4. Տաղ Աստուածատուր Խաչքայեցւոյն — Գովեմք ըզգկեալն արի 34
5. Տաղ վարդին և պլպուլին ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ — Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա . . . 33
6. Գանձ Ուռընկարու սուրբ նշանին — Գերակատար աստուած համայնի 42
7. Մեղեդի ազնիւ — Խոստովանիմք զՄիածին 50
8. Նորին Գրիգորիսի Աղթամարցոյ ասացեալ — Մարմինս ըզհոգիս զրկէ 54
9. Ի Գրիգորիս կաթողիկոսէ — Գանգատ առնեմ սիրով քեզ 55
10. Տաղ անուշ — Այբէն մինչև ի Քէն քենէ գանգատիմ ես . . 57
11. Ի Գրիգորէ Աղթամարցւոյ գովասանութիւն Յովսէփ վարդապետի — Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ 59
12. Տաղ Աստուածածնին յԱղթամարցի Գրիգորիսէ ասացեալ — Անեղին տաճար 60

13. Տաղ սուրբ Աստուածածնին ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ— Արքային փակեալ պարտէզ . . . 62
14. Ըստ անուան երգողին ի Գրիգորիս կաթողիկոսէ— Տապանակ կազմեալ անփուտ 68
15. Տաղ Աղթամարցու ասացեալ է— Արեգակն արդարութեան 71
16. Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցւոյ ըստ անուան երգողին— Գովեմ ըզքեզ մարմնով հրեշտակ 72
17. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Դու ես յԱդինայ դրախտէն 74
18. Նորին Գրիգորիսի ասացեալ— Արեգակնափայլ գեղով լի յու-լին ի տասնումընգէ 76
19. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Աստուածանընկար պատկեր յօրինեալ ի յարարողէն 78
20. Նորին Գրիգորիսի ասացեալ— Դու դրախտ Եդեմայ տընկեալ յանեղէն 79
21. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Դու ես արեգակ, լուսին ի լրման 84
22. Տաղ Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— մաքուր պատկերով նըման հրեշտակի 86
23. Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ— Ահա այգիք մեր ծաղկեցան 91
24. Նորին Գրիգորիսի ըստ անուան երգողին— Գարունն երեկ պըլպուլն յայգին 97
25. Նորին Գրիգորիսի ասացեալ— Յետ գընալոյ վարդին եկ պլպուլն յայգին 99
26. Տաղ զարնան Աղթամարցոյ— Գարունն է բացվեր վարդն ի պաղչանին 105
27. Տաղ ի վերայ նորաշէն տուն և այգի ունեցողի և բալու— Յամէն առաւօտ և լոյս 107

Հավելված

Խմբագրի կողմից 110
Բառարան 112

«ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ
Գրիգորիս Աղթամարցի
Տ ա ղ ե ր

Серия «АРМЯНСКАЯ
КЛАССИЧЕСКАЯ ЛИРИКА»
Григорис Ахтамарци
С т и х о т в о р е н и я
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1984

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ն. Հ. Հակոբյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերատուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ԱԲ 4533

Հանձնված է շարվածքի 22. 07. 83: Ստորագրված է տպագրության 11. 01. 84: Ֆորմատ 70×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Նորք»: Տպագրություն՝ բարձր: 5,25 պայմ. տպ. մամ., 6,38 պայմ. ներկ. թերթ., 4,05 հրատ. մամ.: Գինը՝ 55 կոպ.: Պատվեր 1348: Տպաքանակ՝ 20000:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91:

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.